ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ
MISSION ARMENIA NGO

**«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ»**
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

---

ԱՀ - 482
19.06.2024

Հայաստանի Հանրապետության
Ներքին գործերի նախարար
**պարոն Վահե Ղազարյանին**

Հարգելի՛ պարոն Ղազարյան,

Տեղեկացնում ենք, որ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ գործակցությամբ «Աջակցություն անձը հաստատող փաստաթուղթ չունեցող անձանց և քաղաքացիությունը կորցնելու վտանգի տակ գտնվող անձանց բացահայտմանը» ծրագրի շրջանակներում ոլորտի փորձագետների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության, Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության և այլ շահագրգիռ կառույցների հետ համագործակցությամբ մշակել է «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագիծ:

Հաշվի առնելով «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի սեպտեմբերի 28-ի և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պոզիտիվ պարտավորությունները, ինչպես նաև ազգային օրենսդրության մեջ համապատասխան օրենքի բացակայությունը՝ առաջարկում ենք դիտարկել օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու և նախագծի հետագա ընթացքը ապահովելու հնարավորությունը:

Հարգանքով՝
«Առաքելություն Հայաստան»
ԲՀԿ նախագահ Ս. Մխիթարյան

Հայաստան, Երևան 0026, Նժդեհ 42
42 Nzhdeh, Yerevan 0026, Armenia
հեռ. (010) 444-792
Tel: (010) 444-792
էլ.փոստ. org@ngo.mission.am
E-mail: org@ngo.mission.am
URL: www.mission.am
URL: www.mission.am

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

***«Քաղաքացիություն չունեցող անձանց մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների***

| **1. ՀՀ արտաքին գործերի նախարարություն** | **22.07.2024** |
|---|---|
| | **1111/38285** |
| 1. «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններին, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ծառայության մարմիններին” բառերը փոխարինել «արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմնի միջոցով օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններին և Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ծառայության մարմիններին” բառերով: | **Ընդունվել է:** |

| | |
|---|---|
| 2. ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու փոխարեն վերախմբագրել և սահմանել «քաղաքացիություն չունեցող անձ» հասկացությունը՝ ելնելով հոդվածի վերնագրից և որոշակիության սկիզբունքի պահպանության տեսանկյունից: | **Ընդունվել է:**<br>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 8-րդ հոդվածն ամբողջությամբ ճանաչվել է ուժը կորցրած, քանի որ այն կրում է դեկլարատիվ բնույթ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «օտարերկրացի» հասկացությունը և օտարերկրացիների իրավական կարգավիճակի հետ կապված հարաբերություններն ամբողջական կարգավորված են «Օտարերկրացիների մասին» օրենքով, «քաղաքացիությունն չունեցող անձ» հասկացությունը և կարգավիճակի հետ կապված հարաբերությունները սահմանվում են սույն օրինագծով, ուստի «Քաղաքացիության մասին» օրենքում այս մասով նշումներ կատարելու անհաժեշտությունը բացակայում է: |
| 3. ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««Օտարերկրացիների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի առնչությամբ ՀՀ ԱԳ նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի: | **Ընդունվել է ի գիտություն:** |
| **2. ՀՀ ֆինանսների նախարարություն** | **23.07.2024**<br>**01/11-4/15419-2024** |
| Դիտողություններ և առաջարկություններ չկան: | **Ընդունվել է ի գիտություն:** |
| **3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | **23.07.2024**<br>**ՆՄ/ԳԽ/23343-2024** |
| «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) կապակցությամբ առաջարկում ենք հստակեցնել նախագծում կիրառվող՝ «լիազոր մարմին» և «լիազոր պետական մարմին» եզրույթները: | **Ընդունվել է:** |

| | |
|---|---|
| Բացի այդ, նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց որպես անձը հաստատող փաստաթուղթ տրվում են քաղաքացիություն չունեցող անձի նույնականացման քարտ և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ: Այս տեսակետից հարկ է նկատի ունենալ, որ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փախստականի նույնականացման քարտը փախստականի անձը և Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հաստատող փաստաթուղթ է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար: Ընդ որում, փախստականի կարգավիճակ ՀՀ-ում տրվում է նաև քաղաքացիություն չունեցող անձին:<br>Ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել, թե փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար, ով հանդիսանում է քաղաքացիություն չունեցող անձ, որ փաստաթուղթն է համարվում անձը հաստատող փաստաթուղթ: Առաջարկում ենք այս մասով հստակեցնել, որ Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի նույնականացման քարտը ճանաչվում է անվավեր, եթե անձը ստացել է փախստականի նույնականացման քարտ՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն: | **Չի ընդունվել:**<br><br>Քաղաքացիություն չունեցող անձի և փախստականի կարգավիճակները տարբեր հիմքերի առկայության պարագայում տրամադրվող կարգավիճակներ են և միջազգային պրակտիկայում, այդ թվում՝ «Փախստականների կարգավիճակի մասին» և «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» Կոնվենցիաներով մի կարգավիճակի առկայությունը չի բացառում մյուս կարգավիճակի տրամադրումը:<br>Նշված հանգամանքներում մեկ կարգավիճակով պայմանավորված անձին մյուս կարգավիճակով փաստաթուղթ տրամադրելու մերժումը հիմնավորված չի լինի, ավելին՝ այն կհանգեցնի անձի կարգավիճակի և դրանից բխող իրավունքների խախտման: |
| Փաթեթում ներառված մյուս օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք | **Ընդունվել է ի գիտություն:** |
| **ՀՀ ազգային անվտանգության ծառայություն** | **07.08.2024**<br>**11/1155** |
| «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի | **Ընդունվել է:** |

| | |
|---|---|
| նախագծի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ առաջարկությունները. 1. 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «անձի» բառից հետո առաջարկում ենք լրացնել «նախկին» բառը: | |
| 2. 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը անհրաժեշտ է խմբագրել՝ հաշվի առնելով նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումը: | **Չի ընդունվել:** Առաջարկն անհասկանալի է և լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: |
| 3. 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի ձևակերպումը առաջարկում ենք համապատասխանեցնել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին: | **Չի ընդունվել:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքները կարգավորում են տարբեր կարգավիճակներին առնչվող իրավահարաբերություններ: Բացի այդ, ներկայումս վերանայվում է նաև «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը, որով նշված հոդվածը նույնպես շարադրվելու է այլ խմբագրությամբ: |
| 4. 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի հետ կապված հարաբերությունների կարգավորման հիմնական սկզբունք է սահմանված նաև չվերադարձելիության սկզբունքը, որի կիրառման կամ չկիրառման վերաբերյալ, սակայն, անհրաժեշտ իրավակարգավորումները նախագծում բավարար չափով ներկայացված չեն: Այս կապակցությամբ անհրաժեշտ է խմբագրել նախագիծը՝ դրանում ներառելով համապատասխան դրույթներ նշված սկզբունքի, նախագծի 20-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիություն չունեցող անձի արտաքսման գործընթացի արգելման, ինչպես նաև արտաքսման նպատակով վերջինիս ձերբակալման վերաբերյալ: | **Ընդունվել է մասամբ:** «Չվերադարձելիությունը», որպես սույն օրենքով պաշտպանվող սկզբունք հանվել է նախագծից: Միաժամանակ, Նախագծի 19-րդ հոդվածով սահմանվել է, որ Քաղաքացիություն չունեցող անձը կարող է Հայաստանի Հանրապետության տարածքից արտաքսվել «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված կարգով, որն ամբողջական կարգավորում է արտաքսման հետ կապված հարաբերությունները, ուստի սույն օրենքում կարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է: |
| 5. 5-րդ հոդվածի և հատկապես՝ 1-ին մասի 5-րդ կետը խմբագրման կարիք ունի՝ իրավական որոշակիությունն | **Ընդունվել է:** 5-րդ (նոր նախագծով 4-րդ) հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ |

| | |
|---|---|
| ապահովելու տեսանկյունից: | |
| 6. 6-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի կապակցությամբ առաջարկում ենք նախատեսել մեկ միասնական կարգավորում դիմողի կողմից դիմումը անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայացնելու վերաբերյալ: | **Չի ընդունվել:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուները տարբեր կատեգորիայի անձինք են, որոնց մեջ նաև կարող են լինել ընդհանրապես անձը հաստատող փաստաթուղթ չունեցողներ, ուստի նշված կարգավորումները բխում են անձանց նույնականացումն ապահովելու անհրաժեշտությունից: Բացի այդ, տարբեր իրավիճակներում տարբեր անձանց կողմից դիմում ներկայացնելու տարբերվող կարգեր սահմանելը ինքնանպատակ չէ, այն հետապնդում է ինչպես անվտանգային, այնպես էլ տարբեր կեղծիքներ կանխելու նպատակ: |
| 7. 10-րդ հոդվածում անհրաժեշտ է նախատեսել կարգավորումներ հարցազրույցի մասին դիմողին նախապես ծանուցելու, ծանուցագրում ներառվող տեղեկությունների, հարցազրույցի արձանագրության վերաբերյալ իր կարծիքը ներկայացնելու, այն ստորագրելուց հրաժարվելու դեպքում պատճառները գրավոր արձանագրելու, հարցազրույցի ընթացքում ստացված տեղեկությունները «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի համաձայն չհրապարակելու մասին: | **Չի ընդունվել:** Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ կետը ենթադրում է գրավոր ծանուցման ընթացակարգ, իսկ ծանուցման մեջ ներառվող տեղեկությունների վերաբերյալ գրառումներ կատարելը օրենքում նպատակահարմար չէ: Արձանագրության վերաբերյալ կարծիք հայտնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այն պարտադիր պահանջ է, իսկ հարցազրույցի ընթացքում ստացված տեղեկությունները չհրապարակելը ամրագրելու անհրաժշտությունը նույնպես բացակայում է, քանի որ այն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի ուղղակի պահանջն է: |
| 8. 11-րդ հոդվածի 6-րդ մասում «կատարված» բառից հետո լրացնել «և վավերացված» բառերը: | **Ընդունվել է:** |
| 9. 16-րդ հոդվածի 2-րդ մասում «դիմողի» բառից հետո լրացնել «կամ ներկայացուցչին» բառերը: | **Ընդունվել է:** |
| 10. 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում հստակեցման կարիք ունի «չփաստաթղթավորված անձ» հասկացությունը: Միաժամանակ, անհրաժեշտ է վերանայել հոդվածի վերնագիրը: | **Ընդունվել է:** Վերնագիրը խմբագրվել է, իսկ չփաստաթղթավորված անձ եզրույթը վերաձևակերպվել է «անձը հաստատող փաստաթուղթ չունեցող» եզրույթով: |
| 11.23-րդ հոդվածը անհրաժեշտ է խմբագրել՝ | **Չի ընդունվել:** |

| | |
|---|---|
| սահմանելով իրավակարգավորումներ նշված անձը հաստատող փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսանալու, դրանք ստանալու կամ փոխանակելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու, լիազոր մարմնի կողմից դրանց տրամադրման և գործողության ժամկետների, անվավեր ճանաչելու, կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի նկարագիրը «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» կոնվենցիայի և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության պահանջներին համապատասխանելու և օրենքով կարգավորման ենթակա մի շարք այլ դրույթների մասին: | Առաջարկվող հարցերը կկարգավորվեն 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվելիք ենթաօրենսդրական իրավական ակտով: Նշվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացրել «Պետություն-մասնավոր գործընկերություն» ձևաչափով անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործառույթը արտապատվիրակել մասնավոր ընկերությանը: Այս ուղղությամբ կատարվող աշխատանքները ընթացքի մեջ են և նշված գործընթացի շրջանակներում ինչպես ՀՀ քաղաքացիներին, այնպես էլ ՀՀ-ում օրինական բնակության իրավունք ունեցող անձանց փաստաթուղթ տրամադրելու ընթացակարգերն ամբողջությամբ պետք է վերանայվեն: Ելնելով վերոգրյալից, արտապատվիրակման գործընթացի շրջանակներում հաղթող կազմակերպության հետ պայմանագիր կնքելու հետ զուգահեռ հնարավոր կլինի ամբողջապես կանոնակարգել անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու, փաստաթուղթ տրամադրելու, փաստաթղթի նկարագրին, ժամկետներին վերաբերող հարաբերությունները |
| 12. 23-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը ոչ թէ հավաստում է քաղաքացիություն չունեցող անձի Հայաստանի Հանրապետությունում օրինական գտնվելու և բնակվելու փաստը, այլ նախատեսված է Հայաստանի Հանրապետությունից ելք կատարելու և Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու համար: | **Ընդունվել է մասամբ:**<br>Նախագծում կատարվել է լրացում, որով սահմանվել է, որ Նույնականացման քարտը և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը հավաստում են քաղաքացիություն չունեցող անձի ինքնությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական գտնվելու և բնակվելու փաստը, քանի որ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը նույնականացման քարտին հավասար իրավունք է վերապահում ՀՀ տարածքում գործարքներ կատարել, ավելին, շատ դեպքերում, օրինակ նոտարական գործարքների դեպքում, պարտադիր պահանջվում են ճամփորդական փաստաթղթեր և անձի նույնացումն ապահովելու համար փաստաթղթում նշվում է հենց ճամփորդական փաստաթղթի տվյալները, հետևաբար այն միայն սահման հատելու իրավունք տվող փաստաթուղթ դիտարկելը սխալ է: |

| | |
|---|---|
| 13. Միաժամանակ, 23-րդ հոդվածի 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ճամփորդելու» բառերը առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու» բառերով: | **Ընդունվել է:** |
| 14. Հաշվի առնելով Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, Նախագծի 3-րդ գլխի կապակցությամբ գտնում ենք, որ օրենքով հստակ պետք է թվարկվեն ինչպես քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը որոշելու գործընթացում ներգրավված բոլոր իրավասու մարմինները, այնպես էլ վերջիններիս լիազորություններին վերաբերող իրավակարգավորումները: | **Չի ընդունվել:** Սույն օրինագծում բոլոր պետական մարմինների լիազորությունները սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ յուրաքանչյուր մարմին իր օրենսդրությամբ է սահմանում այն իրավունքների ու պարտականությունների շրջանակը, որը պետք է տրվի քաղաքացիություն չունեցող անձին: Օրինագծով ամրագրված է միայն ՀՀ բոլոր պետական և ՏԻ մարմինների պարտավորությունը՝ քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը աջակցելուն համար, իսկ յուրաքանչյուր ոլորտում (օրինակ՝ կրթության, առողջապահության, սոցիալական և այլն) իրավունքների և պարտականությունների շրջանակը պետք է կանոնակարգվի տվյալ ոլորտի իրավական ակտերով՝ հիմք ընդունելով «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» կոնվենցիաների պահանջները: |
| 15. Կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված դրույթները ևս անհրաժեշտ է արտացոլել նախագծում: Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծում առկա են բովանդակային և խմբագրական բնույթի խնդիրներ, նախագծի վերաբերյալ ամբողջական դիրքորոշում հնարավոր կլինի ներկայացնել դրա լրամշակված տարբերակը ստացվելուց հետո: | **Չի ընդունվել:** Կոնվենցիայի դրույթները օրենքում արտացոլելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այն առաջ կբերի անհարկի կրկնություն և կծանրաբեռնի օրենքը: |
| «Օտարերկրացիների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել օրենքի 14-րդ հոդվածի 2.1-ին մասը: | **Ընդունվել է:** |

| | |
|---|---|
| «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ չկան: | **Ընդունվել է ի գիտություն:** |
| **ՀՀ արդարադատության նախարարություն** | **«28» հոկտեմբեր 2024թ.**<br>**N /27.3/43561-2024** |
| 1. «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «քաղաքացիության» բառից հետո առաջարկում ենք լրացնել «պետությունը» բառը: | **Ընդունվել է** |
| 2. Նախագծի 2-րդ գլխի վերնագրում կիրառվում է «ճանաչման», իսկ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում և 5-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «որոշելու» բառերը:<br>Սույն դեպքում, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ **նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ**՝ անհրաժեշտ է Նախագծում կիրառվող, միևնույն միտքն արտահայտող բառերը համապատասխանեցնել միմյանց: | **Ընդունվել է** |
| 3. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դիմումը լիազոր մարմին է ներկայացվում գրավոր եղանակով՝ հայերեն լեզվով: Դիմումը ներկայացվում է անձամբ: ***Հատուկ կարիքներ ունեցող*** *անձինք դիմումը կարող են ներկայացնել* **փաստաբանի (հանրային պաշտպանի) միջոցով:**<br>Սույն դեպքում, պարզ չէ, թե ինչու է հատուկ կարիքներ ունեցող անձանց դեպքում վերջիններիս անունից և համար դիմում ներկայացնելու իրավունքը սահմանափակվում միայն փաստաբանի (հանրային պաշտպանի) շրջանակով, այլ չի սահմանվում ավելի լայն շրջանակ, այն է՝ լիազորագրի հիման վրա հանդես եկող ցանկացած ներկայացուցչի: Նման | **Չի ընդունվել**<br>Պրակտիկայում մեծամասամբ քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու համար դիմում ներկայացնող անձինք չեն ունենում որևէ փաստաթուղթ /ընդհուպ՝ նաև ծննդյան վկայական/, որը հնարավորություն կընձեռի վարչական մարմնին նույնացնել անձի ինքնությունը: Նման պայմաններում այդ անձինք չեն կարող լիազորագիր տրամադրել երրորդ անձի՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու և իրենց փոխարեն գործողություններ կատարելու համար, ինչով պայմանավորված այդ իրավունքը օրինագծով վերապահվել է փաստաբանին /հանրային |

| | |
|---|---|
| կարգավորումը հնարավորություն կտա հատուկ կարիքներ ունեցող անձի անունից դիմում ներկայացնելու իրավունք վերապահել վերջինիս ցանկությամբ ընտրված ցանկացած անձի (օրինակ՝ դիմում կարող է ներկայացնել փաստաբան չհանդիսացող իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցիչը, փաստաբանի արտոնագիր չունեցող իրավաբանը կամ դիմումատուի ցանկությամբ ցանկացած անձ և այլն) և պարզեցնել դիմում ներկայացնելու գործընթացը, հատկապես, եթե հաշվի առնենք, որ մի կողմից հատուկ կարիք ունեցող դիմողը կարող է ցանկանալ իր համար վստահելի մարդու միջոցով դիմումը ներկայացնել, մյուս կողմից հանրային պաշտպանի ծառայությունից օգտվելը պահանջում է դիմողի կողմից որոշակի ժամանակ պահանջող գործողությունների ձեռնարկում:<br>Ի լրումն վերոնշյալի, եթե միայն փաստաբանի միջոցով դիմում ներկայացնելու պահանջի նպատակը դիմողին պատշաճ իրավաբանական օգնությամբ ապահովելն է, ապա պետք է նշել, որ Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասը մինչև 16 տարեկան անձանց դեպքում դիմում ներկայացնելու իրավունքը վերապահում է վերջիններիս օրինական ներկայացուցչին, ով, ըստ էության, փաստաբան չէ, իսկ մինչև 16 տարեկան անչափահասները, անգործունակ անձինք նվազ խոցելի չեն, քան հատուկ կարիքներ ունեցող անձինք:<br>Վերոգրյալից ելնելով՝ առաջարկում ենք, Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «ներկայացնել» բառից հետո լրացնել «լիազորված անձի, օրինական ներկայացուցչի կամ» բառերը:<br>Բացի այդ, հաշվի առնելով Նախագծի կարգավորումներն՝ անհրաժեշտ է Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «անձամբ» բառից հետո լրացնել «, լիազորված անձի, օրինական ներկայացուցչի, փաստաբանի կամ հանրային պաշտպանի միջոցով» բառերը: | պաշտպանին/, որն իր լիազորությունների շրջանակներում ինչպես մինչև դիմումի ներկայացնելը, այնպես էլ դիմումի քննարկման փուլում համագործակցելով վարչական մարմնի հետ կարող է իրավասու կառույցներից ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթեր՝ անձի նույնացումն ապահովելու համար, իսկ իրավաբանական նշանակության փաստ հաստատելու անհրաժեշտության դեպքում՝ որպես ներկայացուցիչ հանդես գալ համապատասխան դատական ատյաններում կամ նոտարական գրասենյակներում: Բացի այդ, դիմումատուի նույնացված չլինելու և փաստաթուղթ չունենալու պայմաններում այլ անձի կողմից դիմում ներկայացնելու փաստը կարող է չարաշահումների և կեղծիքների տեղիք, անհարկի ծանրաբեռնելով վարչական մարմնին՝ անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու կամ վարչարարական այլ գործողություններ իրականացնելու ժամանակ: |
| Միաժամանակ, Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «փաստաբանի (հանրային պաշտպանի)» ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել, քանի որ պարզ չէ «հանրային | **Ընդունվել է**<br>«(հանրային պաշտպանի)» բառերը հանվել են, հաշվի առնելով, որ |

| | |
|---|---|
| պաշտպանի» բառերի փակագծերում նախատեսելու նպատակը՝ նշված եզրույթները նույնացվում են, թե փաստաբանի վերաբերյալ կարգավորումները վերաբերում է նաև հանրային պաշտպանին: Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասին: | «Փաստաբանության մասին» օրենքում նախատեսվող լրացմամբ նշված հարցն արդեն իսկ կարգավորվում է |
| 4. Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է, որ անգործունակ անձի համար դիմումը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը: Սակայն, Նախագիծը սահմանափակ գործունակ ճանաչված անձանց անունից ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացնելու հարցին չի անդրադարձել, որից հետևում է, որ սահմանափակ անձանց նկատմամբ տարածվում է ընդհանուր կանոնը, այն է՝ վերջիններս դիմում կարող են ներկայացնել միայն անձամբ: Հաշվի առնելով սահմանափակ անձանց որոշակի խոցելիությունը՝ առաջարկում ենք դիտարկել վերջիններիս անունից և համար դիմում ներկայացնելու իրավունքը նրանց օրինական ներկայացուցիչներին վերապահելու նպատակահարմարությունը: | **Չի ընդունվել**<br><br>Նշված հարցը կարգավորված է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 35-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի սահմանափակ գործունակ ճանաչված անձանց հոգաբարձուները համաձայնություն են տալիս այնպիսի գործարքներ կնքելու համար, որոնք հոգաբարձության ներքո գտնվող անձինք իրավունք չունեն ինքնուրույն կնքել: Հոգաբարձուներն աջակցում են հոգաբարձության ներքո գտնվող անձանց՝ իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս, ինչպես նաև պաշտպանում են նրանց երրորդ անձանց չարաշահումներից:<br>Տվյալ պարագայում՝ Քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու և անձը հաստատող փաստաթուղթ ստանալու դիմում ներկայացնելու համար հոգաբարձուի համաձայնություն ստանալու անհրաժեշտությունը բացակայում է /այս առումով հարկ է նշել, որ նման մոտեցում է ձևավորված նաև «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքում, որով սահմանափակ գործունակ անձը անձնագիր ստանում է իր դիմումի համաձայն/, որոշակի խոսցելի դեպքերում, հոգաբարձությունը հավաստող փաստաթղթի առկայության պարագայում հոգաբարձուն կարող է աջակցել սահմանափակ գործունակ ճանաչված անձին՝ դիմում ներկայացնելիս |
| 5. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերից ելնելով, պարզ չէ, թե ինչ ձևաչափով է ներկայացվելու դիմումը, ուստի առաջարկում ենք Նախագծով նախատեսել դիմումի ձևաչափը հաստատելու մասով լիազորող նորմ: | **Չի ընդունվել**<br>5-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանվել են դիմումին ներկայացվող պահանջները, մասնավորապես այն պետք է պարունակի դիմողի անունը, ազգանունը, դիմողի հասցեն, դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են), դիմումը կազմելու տարին, ամիսը և |

| | |
|---|---|
| | ամսաթիվը, դիմողի ստորագրությունը: Դիմումն իր մեջ նաև պետք է պարունակի քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ փաստեր, մասնավորապես, պետք է նշված լինի դիմողի ծննդավայրը, նախկին բնակության վայրը և բնակվելու տևողությունը ցանկացած այլ երկրի տարածքում, նախկինում քաղաքացիություն ունենալու մասին, ընտանիքի անդամների (ծնող, որդեգրող, ամուսին, նախկին ամուսին, զավակ, քույր, եղբայր) վերաբերյալ տեղեկությունները՝ մասնավորապես, նրանց որևէ պետության քաղաքացի հանդիսանալու մասին: Դիմումում նշվում են նաև դիմողի անհատական տվյալներում կատարված փոփոխությունների, ինչպես նաև այլ պետություններից երբևէ ստացված փաստաթղթերի մասին (նույնիսկ եթե դրանք իր տրամադրության տակ չեն):<br>Հաշվի առնելով, որ վերը թվարկված հանգամանքները յուրաքանչյուր անձի համար տարբեր են և պետք է շարադրվեն կոնկրետ դեպքով պայմանավորված, ուստի դիմումի մեկ միասնական ձևաչափ սահմանելը նպատակահարմար չէ |
| 6. Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասի «և (կամ)» ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջները: Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի ամբողջ տեքստում կիրառվող նույնանման ձևակերպումներին: | **Ընդունվել է** |
| Բացի այդ, Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասի «Անգործունակ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «ճանաչված» բառը: Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 13-րդ հոդվածի 3-րդ մասին: | **Ընդունվել է** |
| 7. Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ **դիմումը պետք է պարունակի** դիմողի անունը, ազգանունը, դիմողի հասցեն, դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են), դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը, դիմողի ստորագրությունը: Դիմումն իր մեջ նաև պետք է պարունակի քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ փաստեր, | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| մասնավորապես, պետք է նշված լինի դիմողի ծննդավայրը, նախկին բնակության վայրը և բնակվելու տևողությունը ցանկացած այլ երկրի տարածքում, նախկինում քաղաքացիություն ունենալու մասին, ընտանիքի անդամների (ծնող, որդեգրող, ամուսին, նախկին ամուսին, զավակ, քույր, եղբայր) վերաբերյալ տեղեկությունները՝ մասնավորապես, նրանց որևէ պետության քաղաքացի հանդիսանալու մասին: *Դիմումում նշվում են նաև դիմողի* ***անհատական տվյալներում*** *կատարված փոփոխությունների, ինչպես նաև այլ պետություններից երբևէ ստացված փաստաթղթերի մասին (նույնիսկ եթե դրանք իր տրամադրության տակ չեն):*<br>Նշված կարգավորումից բխում է, որ դիմումը ներկայացնելիս այն պարտադիր պետք է պարունակի համապատասխան տեղեկություններ, սակայն գործնականում կարող են առաջանալ դեպքեր, երբ, օրինակ, առանց ուղեկցողի երեխան կամ ընտանիքից անջատված երեխան չտիրապետի նշված տեղեկություններին, հետևաբար պարզ չէ, թե ով է նշված անձանց դեպքում ներկայացնելու տեղեկությունները:<br>Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասը հստակեցնել: | |
| Բացի այդ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ ԱՏՊ օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալ է **մարդուն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնող տեղեկությունները**, այսինքն՝ մարդուն նույնականացնելու հատկություն ունեցող ցանկացած տեղեկությունը: Հետևաբար, Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասում նշված «անհատական տվյալներ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «անձնական տվյալներ» բառերով: Նույն պատճառաբանությամբ Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում «անհատական տվյալների» բառերն անհրաժեշտ է փոխարինել «անձնական տվյալների» բառերով, եթե նկատի են առնվում Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի | **Ընդունվել է մասամբ**<br>5-րդ հոդվածի 6-րդ մասում «անհատական» բառը փոխարինվել է «անձնական» բառով<br>Ինչ վերաբերում է կոնկրետ անձնական տվյալները նշելուն, ապա դրանց հստակ շրջանակ սահմանելը նպատակահարմար չէ, քանի որ մարդուն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնացնող տվյալները բազմաթիվ են /ծննդյան օր, ամիս, տարեթիվ, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդավայր և այլն/:<br>«Այլ պետություններից դիմողի երբևէ ստացած փաստաթղթերի մասին» տեղեկություններ ներկայացնելու պահանջի սահմանումը |

| | |
|---|---|
| 1-ին կետում նշված տեղեկություններում կատարվող փոփոխությունները, ապա այդ դեպքում կարելի է գործածել նաև «նույնականացնող տվյալներ» եզրույթը:<br>Միաժամանակ, Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասում առաջարկում ենք հստակեցնել, թե դիմողը դիմումում իր որ անձնական տվյալների հետ կատարվող փոփոխությունների մասին պետք է նշի:<br>Բացի այդ, Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասը նշում է, որ դիմումն իր մեջ պետք է տեղեկություններ պարունակի այլ պետություններից դիմողի երբևէ ստացած փաստաթղթերի մասին (նույնիսկ եթե դրանք իր տրամադրության տակ չեն): Այստեղ պարզ չէ, արդյո՞ք նկատի է առնվում ցանկացած փաստաթուղթը, թե միայն դիմողի կարգավիճակն որոշելու համար անհրաժեշտ որոշակի փաստաթղթերը (օրինակ՝ անձը հաստատող փաստաթուղթ, վարորդական իրավունք, դիպլոմ և այլն): | պայմանավորված է այն հանգամանքով, որ այս կատեգորիայի դիմումատուները չունենալով նույնացնող որևէ փաստաթուղթ պետք է հիմնավորեն իրենց ինքնությունը և որևէ պետության հետ կապի առկայությունը և բացակայությունը, հետևաբար տրամաբանական է, որ ցանկացած փաստաթուղթ, որը նրանք ստացել են որևէ պետության տարածքում կարող է հիմք հանդիսանալ այդ պետության քաղաքացի հանդիսանալու կամ չհանդիսանալու փաստը հիմնավորելու համար |
| 8. Նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմինը անհրաժեշտության դեպքում աջակցում է դիմումի լրացման հարցում, պարզաբանում է դիմողին դիմումի քննարկման ողջ գործընթացը, իրազեկում է դիմումի քննարկման ողջ ընթացքում դիմողի իրավունքների և պարտականությունների մասին, իսկ դիմողի ցանկության դեպքում՝ **տրամադրում է տեղեկանք** այն մասին, որ վերջինիս դիմումը գտնվում է քննարկման փուլում:<br>Սույն դեպքում, անհրաժեշտ է հստակեցնել, թե լիազոր մարմինը ինչ կարգով է դիմողին տրամադրում տեղեկանք: | **Չի ընդունվել**<br><br>Տեղեկանք տրամադրելու համար առանձին կարգ սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է, եթե դիմողի կողմից կներկայացվի նման պահանջ, ապա լիազոր մարմինը տեղեկանքի տեսքով կազմված գրությամբ կհաստատի դիմումը քննարկման փուլում գտնվելու հանգամանքը՝ հիմք ընդունելով նշված նորմի ուժով |
| 9. Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է, որ դիմումի քննարկման ընթացքում դիմողը «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն օգտվում է անվճար իրավաբանական օգնությունից՝ իր դիմումի քննարկման վարույթի շրջանակներում: Այս դրույթի բովանդակությունից հետևում է, որ ցանկացած պարագայում՝ անկախ իր կամքից, դիմողը պետք է օգտվի անվճար իրավաբանական օգնությունից, ուստի առավել նպատակահարմար է նշված մասում | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| «օգտվում է» բառերը փոխարինել «կարող է օգտվել» կամ «իրավունք ունի օգտվել» բառերով, որը կմատնանշի դիմողի իրավունքը և այդ իրավունքից օգտվելու կամ չօգտվելու դիմողի հայեցողություն ունենալու հնարավորությունը: | |
| 10. Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մասում «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի 8-րդ հոդվածին կատարված հղումն անհրաժեշտ է վերանայել, քանի որ նշված հոդվածը վերաբերում է դիմումի քննարկմանը: | **Ընդունվել է** |
| 11. Նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմինն իր իրավասության շրջանակներում **աջակցում է** դիմողներին այլ մարմինների հետ հարաբերություններում նրանց՝ սույն օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված բոլոր իրավունքների և ազատությունների իրացման հարցում:<br>Սույն կարգավորումից պարզ, չէ ինչ կարգով և որ դեպքերում է իրականացվում աջակցությունը, ուստի այդ մասով Նախագիծն ունի հստակեցման կարիք: | **Չի ընդունվել**<br>Ակնհայտ է, որ բոլոր դեպքերը կանխատեսել և թվարկել հնարավոր չէ, հետևաբար, այն պարագայում երբ դիմումատուն կունենա աջակցության կարիք և լիազոր մարմինը կարող է իր իրավասությունների շրջանակում անձի իրավունքների իրացման նպատակով դիմել այլ մարմինների, ապա լիազոր մարմինը կկազմակերպի նշված աջակցության ստացումը:<br>Հարկ է նշել, որ այս նորմն ունի մարդասիրական նշանակություն, քանի որ այս կատեգորիայի անձինք համարվում են խոցելի խումբ և պրակտիկայում ևս լիազոր մարմինը տարբեր պետական և ոչ պետական կառույցների հետ համագործակցելով դիմումատուներին ուղղորդում է նշված հաստատություններ՝ իր իրավունքներն իրացնելու նպատակով |
| 12. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դիմումի քննարկման ընթացքում լիազոր մարմինն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում հավաքելու համար տեղեկություններ անձի ծննդավայրից, նրա գտնվելու կամ բնակության նախկին վայրերից, ինչպես նաև այն պետություններից, որոնց քաղաքացիներ են հանդիսանում դիմողի ընտանիքի անդամները (ծնող, որդեգրող, ամուսին, նախկին ամուսին, զավակ, քույր, եղբայր) կամ այն պետություններից, որոնց քաղաքացիներ են հանդիսացել դիմողը և (կամ) դիմողի ընտանիքի անդամները (ծնող, որդեգրող, ամուսին, նախկին ամուսին, զավակ, քույր, եղբայր) նախկինում: Այս դրույթը միայն սահմանում է, թե լիազոր մարմինը որտեղից կարող է տեղեկություններ ստանալ, | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| սակայն չի մատնանշում, թե նշված վայրերում գտնվող կոնկրետ ո՞ր սուբյեկտներից, ի՞նչ տեղեկություններ (դիմողի անձնական տվյալներ) կարող է հավաքել:<br>Այնինչ ԱՏՊ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածները սահմանում են, որ առանց տվյալների սուբյեկտի համաձայնության **անձնական տվյալների մշակումն օրինական է, եթե տվյալներ մշակելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով**: Անձնական տվյալների մշակման **«օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելու»** պահանջը նշանակում է, որ օրենքը **ուղղակիորեն և հստակ** պետք է սահմանի անձնական տվյալների մշակման բոլոր **բովանդակային պայմանները,** մասնավորապես, թե լիազոր մարմինը ո՞ր սուբյեկտներից (օրինակ՝ այլ պետության իրավասու մարմիններից, կազմակերպություններից, օրինակ՝ դիմողի ծննդավայրի ուսումնական հաստատությունից կամ դիմողի ազգականներից, հարկ է նշել, որ ի տարբերություն քննարկվող իրավադրույթի՝ Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է սուբյեկտների որոշակի ցանկ) ի՞նչ տեղեկություններ կարող է ստանալ, հավաքել:<br>Սույն դեպքում, առաջարկում ենք Նախագծում սահմանել լիազոր մարմնի կողմից հավաքվող տեղեկությունների շրջանակը, մասնավորապես հստակեցնել հավաքվող տեղեկությունների շրջանակը, ինչպես Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասում, կամ հավաքվող տեղեկությունների շրջանակն սահմանելու անհնարինության դեպքում ամրագրել «քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ» բառակապակցությունը: | |
| 13. Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմինը նախքան ապացույցների հավաքման գործընթացը սկսելը **պարզում է** դիմողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստանի հայց ներկայացված լինելու հանգամանքը:<br>Սույն դեպքում, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ | **Չի ընդունվել**<br><br>Հաշվի առնելով, որ ապաստանի հայցի քննարկումը և քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշումը իրականացվում է նույն մարմնի՝ ՆԳՆ ՄՔԾ կողմից, ուստի նշված հանգամանքը պարզելու համար |

| | |
|---|---|
| կարգով է լիազոր մարմինը պարզում դիմողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստանի հայց ներկայացված լինելու հանգամանքը: | առանձին ընթացակարգ սահմանելը նպատակահարմար չէ, պարզ է, որ նույն ծառայության մեջ գործող մի ստորաբաժանումը մյուսից տեղեկություն պետք է ստանա գրավոր հարցմամբ, եթե խոսքը վերաբերում է ապաստանի հայցերին՝ դրանց գաղտնիությամբ պայմանավորված |
| 14. Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմինը հաշվի է առնում անչափահասների լավագույն շահը և երաշխավորում է նրանց մասնակցությունն ու լսված լինելու իրավունքը դիմումի քննարկման բոլոր փուլերում, ինչպես նաև իրենց վերաբերող որոշումներ կայացնելիս՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով նրանց տարիքն ու հասունության աստիճանը՝ **անհրաժեշտության դեպքում ներգրավելով իրավասու մասնագետների:**<br>Այսպես, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: *Երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինը օրենքով նախատեսված դեպքերում* ***ներգրավում է մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի:*** Նշված կարգավորումը հաշվի առնելով՝ առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «իրավասու մասնագետների» բառերը փոխարինել «մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի» բառերով:<br>Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասին: | **Ընդունվել է** |
| 15. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հարցազրույցի ընթացքը արձանագրվում է: **Դիմողի համաձայնության դեպքում** հարցազրույցը ձայնագրվում է: (…) Սույն դեպքում, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կարգով է տրվում համաձայնությունը: | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| Բացի այդ, ելնելով Նախագծի կարգավորումներից՝ անհրաժեշտ է Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի «Դիմողի» բառից հետո լրացնել «, լիազորված անձի, օրինական ներկայացուցչի, փաստաբանի կամ հանրային պաշտպանի» բառերը: Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասին: | **Չի ընդունվել**<br>Հարցազրույցն անցկացվելու է դիմողի հետ, ուստի համաձայնություն պետք է տա դիմողը: Բացի այ՝ հնարավոր են իրավիճակներ, երբ դիմողը համաձայն լինի հարցազրույցը ձայնագրելուն, իսկ նրա ներկայացուցիչը՝ ոչ, կամ հակառակը |
| Միաժամանակ, Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «ամսաթիվը» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «տարին, ամիսը,» բառերը: | **Ընդունվել է** |
| 16. Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հարցազրույցի արձանագրությունը կազմելուց հետո հարցազրույցն անցկացնող պաշտոնատար անձի կողմից ընթերցվում է բարձրաձայն: **Թարգմանության անհրաժեշտության դեպքում՝ լիազոր մարմնի կողմից ապահովվում է արձանագրության թարգմանությունը դիմողին հասկանալի լեզվով:** Հարցազրույցի արձանագրության վերջնական տեքստը ստորագրում են դիմողը, հարցազրույցն անցկացնող պաշտոնատար անձը, ինչպես նաև թարգմանիչը և սույն հոդվածի 4-6-րդ և 8-րդ մասերով նախատեսված անձինք, եթե վերջիններս ներգրավված են եղել հարցազրույցին:<br>Սույն դեպքում, անհրաժեշտ է պարզաբանել, թարգմանությունը իրականացվում է բանավոր, թե գրավոր եղանակով: Եթե այն իրականացվում է գրավոր եղանակով, ապա անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ժամկետում է լիազոր մարմնի կողմից ապահովվում արձանագրության թարգմանությունը: | **Ընդունվել է** |
| Բացի այդ, առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասի «ընթերցվում է» բառերից առաջ լրացնել «այն» բառը: | **Ընդունվել է** |
| 17. Նախագծի 10-րդ հոդվածի վերնագիրն է՝ | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| ապացույցները և ապացուցման կանոնները, մինչդեռ նշված հոդվածի 5-րդ մասը վերաբերում է նաև անձի կարգավիճակի որոշման գործընթացի կասեցմանը:<br>Այսպես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ (...) **Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը:** Հոդվածների վերնագրերի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում: Հոդվածի մասերը, կետերը և ենթակետերը վերնագիր չեն ունենում: Նշվածը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծի վերնագիրը և բովանդակությունը համապատասխանեցնել միմյանց: | |
| 18. Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **դիմումի քննարկման ընթացքում լիազոր մարմինը համապատասխան հարցումներ է կատարում** Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններ, կազմակերպություններ:<br>Սույն դեպքում, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ժամկետում է կատարվում հարցումները, քանի որ Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասից բխում է, որ մինչև դիմումի քննարկման համար սահմանված ժամկետի ավարտը պատասխան չստանալը դիտվում է որպես անձի՝ տվյալ պետության քաղաքացիություն չունենալու ապացույց: | **Չի ընդունվել**<br>Կոնկրետ ժամկետ ամրագրելը նպատակահարմար չէ, քանի որ դիմումի քննարկման ցանկացած ժամանակահատվածում կարող է հարցում կատարելու անհրաժեշտություն առաջանալ, քանի որ իրավիճակները տարբերն են, օրինակ մի դեպքում դիմումատուն կարող է ներկայացնել որևէ երկրի կողմից տրված փաստաթուղթ, որի իսկությունը պետք է հստատվի, մեկ այլ դեպքում լիազոր մարմինը վարչարարության ընթացքում կարող է պարզել դիմումատուի կապը որևէ պետության հետ, որի արդյունքում նոր որոշի, արդյոք պետք է կամ հնարավոր է տվյալ պետություն հարցում կատարել, թե՝ ոչ և այլն:<br>Վերոգրյալով պայմանավորված էլ՝ դիմումատուի իրավունքների իրացման առաջնայնությունը հաշվի առնելով օրինագիծը կազմվել է այն տրամաբանությամբ, որ մինչև օրենքով սահմանված քննարկման ժամկետի ավարտը պատասխան չստանալու դեպքում լիազոր մարմինը կայացնում է որոշում առկա փաստական հանգամանքներով, ինչը լիազոր մարմնին պատավորեցնում է անհրաժեշտություն առաջանալու դեպքում հարցումները կատարել հնարավորինս արագ: |
| Բացի այդ, «համապատասխան» բառը անորոշ և ընդհանրական է և չի հստակեցնում, թե կոնկրետ ի՞նչ (ի՞նչի) վերաբերյալ հարցումներ են կատարվում (օրինակ՝ դիմողի | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցումներ): Հարցումների տեսակը կամ բնույթն անհրաժեշտ է հստակեցնել նաև Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասում, երբ նշվում է «և անհրաժեշտության դեպքում որոշումը կայացվում է առանց համապատասխան օտարերկրյա պետություններ **հարցումներ ուղարկելու**»: | |
| 19. Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմնի կամ նրա միջնորդությամբ՝ Հայաստանի Հանրապետության այլ պետական մարմնի կողմից օտարերկրյա պետության լիազորված մարմնին հարցում կատարելիս՝ **մինչև դիմումի քննարկման համար սահմանված ժամկետի ավարտը պատասխան չստանալը դիտվում է որպես անձի՝ տվյալ պետության քաղաքացիություն չունենալու ապացույց,** եթե հակառակը հիմնավորող այլ ապացույցներ չկան:<br>Այսպես, Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի քննարկման համար սահմանված ժամկետն է 6 ամիսը, սակայն նույն հոդվածով նախատեսված է, որ գործի բարդությամբ, **այդ թվում օտարերկրյա պետություններ հարցումներ կատարված լինելու հանգամանքով պայմանավորված՝ դիմումի քննարկման ժամկետը կարող է *երկարաձգվել ևս 3 ամսով:***<br>Վերոգրյալը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել: | **Չի ընդունվել**<br>Ակնհայտ է, որ «սահմանված ժամկետ» արտահայտությունն իր մեջ ներառում է նաև երկարաձգման ժամկետը, քանի որ այն ևս սույն օրինագծով սահմանված ժամկետ է: |
| 20. Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասում «երկրներ հարցումների» բառերն անհրաժեշտ է փոխարինել «երկիր հարցման» բառերով: | **Ընդունվել է** |
| Բացի այդ, Նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ մասի «օրենքով սահմանված կարգով **կատարված և վավերացված**» ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել: | **Չի ընդունվել**<br>Ձևակերպումը վերանայելու մասով առաջարկը չի հիմնավորվել, մինչդեռ այլ իրավական ակտերում նման ձևակերպումներ արդեն իսկ առկա են |
| 21. Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ընթացակարգն» բառն անհրաժեշտ է փոխարինել «գործընթացն» բառով, հաշվի առնելով Նախագծի 12-րդ | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| հոդվածի վերնագրում և մյուս կարգավորումներում կիրառվող ձևակերպումները, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: | |
| Բացի այդ, Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասում և մյուս կարգավորումներում կիրառվում է «քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը ճանաչելու կամ ճանաչումը մերժելու մասին որոշում», իսկ 2-րդ մասում՝ «քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ դիմումի բավարարման կամ մերժման մասին որոշումը»: Միաժամանակ Նախագծի 15-րդ հոդվածի վերնագիրը և կարգավորումները վերաբերում են **դիմումը մերժելու մասին որոշմանը:** Այսպես, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասն՝ անհրաժեշտ է Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերում և 15-րդ հոդվածի վերնագրում և կարգավորումներում կիրառվող ձևակերպումները համապատասխանեցնել միմյանց: | **Ընդունվել է** |
| 22. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «անձն» բառն անհրաժեշտ է փոխարինել «դիմողը» բառով: | **Ընդունվել է** |
| 23. Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «դիմում ներկայացրած անձի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «դիմողի» բառով՝ նկատի ունենալով Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը: Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասին:<br>Բացի այդ, Նախագծի 13-րդ հոդվածի 3-րդ մասում «ներկայացուցչին» բառն անհրաժեշտ է վերանայել՝ հաշվի առնելով Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի կարգավորումները:<br>Միաժամանակ, հարկ է նշել, որ Նախագծի 13-րդ հոդվածի կարգավորումներից պարզ չէ, թե ում է ուղարկվում | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| առանց ուղեկցողի երեխայի և ընտանիքից անջատված երեխայի վերաբերյալ կայացված որոշումը, ուստի այդ մասով Նախագիծն ունի լրամշակման կարիք: | |
| 24. Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի 23-րդ հոդվածին կատարված հղումն անհրաժեշտ է վերանայել, քանի որ նշված հոդվածը վերաբերում է օրենքի ուժի մեջ մտնելուն:<br>Բացի այդ, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասը, համաձայն որի՝ **եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից՝** անհրաժեշտ է Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «փաստաթուղթ (փաստաթղթեր)» ձևակերպումը վերանայել: Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասին: | **Ընդունվել է** |
| 25. Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դիմումը մերժվում է, եթե **ծանրակշիռ հիմքեր կան համարելու**, որ դիմողը, նախքան Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելը, կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն:<br>Սույն դեպքում, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածը, համաձայն որի՝ **հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով՝** անհրաժեշտ է Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ծանրակշիռ հիմքեր կան համարելու» ձևակերպումը վերանայել | **Չի ընդունվել**<br>Դիմումի մերժման նման հիմքի նախատեսումը բխում է Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին ՄԱԿ-ի 1954թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի պահանջների կատարման անհրաժեշտությունից:<br>Հարկ է նշել, որ Փախստականի կարգավիճակի տրամադրումը մերժելու նմանօրինակ հիմք նախատեսված է նաև «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ հիմք ընդունելով «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի պահանջները: Այս կապակցությամբ ՄԱԿ-ի ՓԳՀ գրասենյակի հրապարակած՝ Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկի 149-րդ, 151-161 կետերը բավական մանրամասն կանոնակարգում են կարգավիճակի տրամադրումը բացառելու համապատասխան հիմքերի կիրառման ընթացքը և որևէ իրավական արգելք չկա այն որպես ուղեցույց ունենալու |

| | |
|---|---|
| | և համապատասխան իրավակիրառ գործունեության մեջ օգտագործելու համար:<br><br>Միաժամանակ, հարկ է փաստել, որ միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տվել, որ ՄԱԿ-ի անդամ պետություններից մեծամասնությունն արտացոլել է իր օրենսդրության մեջ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի մերժման հիմքերն այնպես, ինչպես ամրագրված է Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին ՄԱԿ-ի 1954թ. կոնվենցիայում (օրինակ՝ Մոլդովայի Հանրապետությունում օտարերկրացիների կարգավիճակի մասին օրենքի 87.8. հոդված, Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակի մասին Վրաստանի օրենքի 23-րդ հոդված՝ https://matsne.gov.ge/en/document/download/2278806/7/en/pdf |
| 26. Նախագծի 16-րդ հոդվածի կարգավորումներից պարզ չէ, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը անվավեր ճանաչելու դեպքում քաղաքացիություն չունեցող անձանց նույնականացման քարտը և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը հանձնվում է լիազոր մարմին թե ոչ: Նշվածը հաշվի առնելով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 68-րդ հոդվածի կարգավորումները՝ առաջարկում ենք Նախագծով նախատեսել համապատասխան փաստաթղթերի վերադարձման վերաբերյալ կարգավորումներ:<br>Նույն դիտարկումը վերաբերում է այն դեպքերին, երբ քաղաքացիություն չունեցող անձը ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության քաղաքացիություն, ինչի արդյունքում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը դադարեցվում է:<br>Բացի այդ, Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի «որոշումները» բառն անհրաժեշտ է փոխարինել «որոշումը» բառով: | **Ընդունվել է**<br><br>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը հիմք ընդունելով նշված հոդվածում կարգավորում չի նախատեսվել, սակայն հիշյալ 22-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվել է լրացում՝ ենթաօրենսդրական ակտով նշված հարցը կարգավորելու համար |
| 27. Նախագծի 18-րդ հոդվածում առկա է չհամարակալված պարբերություն: Սույն դեպքում, հիմք | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ **օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների:** Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի՝ անհրաժեշտ է Նախագծի 18-րդ հոդվածի չհամարակալված պարբերությունը համարակալել: | |
| 28. Նախագծի 19-րդ հոդվածը վերաբերում է քաղաքացիություն չունեցող անձի արտաքսմանը, մինչդեռ Նախագծի 1-ին հոդվածով սահմանվում է, որ սույն օրենքը կարգավորում է այդ թվում նաև **Հայաստանի Հանրապետությունում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց արտաքսման ընթացակարգերը և դեպքերը:** Նշվածը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծի 19-րդ հոդվածի վերնագիրը խմբագրել:<br>Միաժամանակ, Նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ մասի փոխարեն, արտաքսման ընթացակարգն անհրաժեշտ է նախատեսել սույն օրենքով: | **Ընդունվել է մասամբ**<br><br>Նախագծի 1-ին հոդվածից «ընթացակարգերը և դեպքերը» բառերը հանվել են:<br>Ինչ վերաբերում է ընթացակարգը սույն օրինագծով սահմանելուն, ապա այս մասով առաջարկը չի ընդունվել, քանի որ քաղաքացիություն չունեցող անձի և օտարերկրացու արտաքսման ընթացակարգերը բացարձակ նույնն են, ուստի նույն կարգավորումները /արտաքսման գործի հարուցում, արգելող հանգամանքների պարզում, լսումների իրականացում, գործը դատարան ներկայացում, բողքարկում և այլն/ սույն օրենքով սահմանելը անհարկի կծանրաբեռնի օրենքը |
| Բացի այդ, Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «ազգային» բառն անհրաժեշտ է փոխարինել «պետական» բառով՝ հիմք ընդունելով 21-րդ 30-րդ և 31-րդ հոդվածների կարգավորումները: | **Ընդունվել է** |
| 29. Նախագծի 20-րդ հոդվածի վերնագրում «մարմինը» և 21-րդ հոդվածում «մարմինները» բառերն առաջարկում ենք փոխարինել համապատասխանաբար «մարմնի իրավասությունները» և «մարմինների իրավասությունները» բառերով: | **Ընդունվել է** |
| 30. Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «նույնացումն» բառն անհրաժեշտ է փոխարինել «նույնականացումն» բառով, եթե նկատի է առնվում անձի | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| ինքնության հաստատումը | |
| 31. Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմին» բառերն առաջարկում ենք փոխարինել «աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող լիազոր մարմին» բառերով՝ նկատի ունենալով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի Հավելվածի 1-ին կետի կարգավորումը:<br>Բացի այդ, Նախագծի 22-րդ հոդվածի կարգավորումներից պարզ չէ, քաղաքացիություն չունեցող անձանց տրվող անձը հաստատող փաստաթղթերը տրամադրվում են անվճար, թե դրանց դիմաց գանձվում է պետական տուրք, ուստի նշված կարգավորումն ունի լրացուցիչ պարզաբանման կարիք: | **Ընդունվել է** |
| 33. Նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացիություն չունեցող անձանց նույնականացման քարտ և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տրամադրելու կարգը, պայմանները, ժամկետները **և փաստաթղթերի նկարագիրը** սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>Սույն դեպքում, առաջարկում ենք Նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասի «փաստատթղթերի» բառից հետո լրացնել «ձևը և» բառերը | **Ընդունվել է** |
| 34. Նախագծի 5-րդ գլխի վերնագրում «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ» բառերը: | **Ընդունվել է** |
| 35. Նախագծի 23-րդ հոդվածի վերնագրի «Սույն օրենքի ուժի մեջ մտնելը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերով:<br>Բացի այդ, Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի «Օրենքն» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքն» բառով | **Ընդունվել է** |
| 36. Նախագծի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ | **Չի ընդունվել** |

| | |
|---|---|
| մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրված կացության վկայականները համարվում են վավերական Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ մինչև դրանց ժամկետի ավարտը, եթե **քաղաքացիություն չունեցող անձը այն փոխանակելու դիմում չի ներկայացրել**:<br>Սույն դեպքում, հաշվի առնելով վերոգրյալ կարգավորումը՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածում նախատեսել քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրված կացության վկայականի փոխանակելու համար դիմում ներկայացնելու վերաբերյալ կարգավորում: | Նշված հարցը կկանոնակարգվի 22-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական ակտով |
| 37. Նախագծի «ԳԼՈՒԽ 1.» բառը և կետադրական նշանն անհրաժեշտ է փոխարինել «ԳԼՈՒԽ 1» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտի բաժիններն ու գլուխները համարակալվում են արաբական թվանշաններով: Բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը: **Գլուխների և բաժինների վերնագրերը գրվում են մեծատառերով, և վերնագրերի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում:** | **Ընդունվել է** |
| 38. Նախագծի 4-րդ հոդվածի «սկզվունքների» բառը անհրաժեշտ է փոխարինել «սկզբունքների» բառով:<br>39. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «.)» կետադրական նշաններն անհրաժեշտ է փոխարինել «).» կետադրական նշաններով<br>40. Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի «;» կետադրական նշանն անհրաժեշտ է փոխարինել «,» կետադրական նշանով:<br>41. Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մասի «.» կետադրական նշանն անհրաժեշտ է փոխարինել «:» կետադրական նշանով | **Ընդունվել է** |
| 42. «Օտարերկրացիների մասին» օրենքի 2-րդ հոդվածի | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| համաձայն՝ սույն օրենքով **«օտարերկրացիներ» հասկացության մեջ ներառվում են** Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) **կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք):**<br>Սույն դեպքում, հիմք ընդունելով Նախագծի կարգավորումները և հաշվի առնելով ««Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի կարգավորումը՝ անհրաժեշտ է «Օտարերկրացիների մասին» օրենքում քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ կարգավորումները վերանայել, հակառակ դեպքում, Նախագծի ընդունման պարագայում քաղաքացիություն չունեցող անձանց հետ կապված հարաբերությունները կկարգավորվեն միաժամանակ երկու տարբեր իրավական ակտերով: | Օտարերկրացիների մասին» օրենքում կատարվել է լրացում, համաձայն որի «օտարերկրացի» հասկացությունը նշված օրենքի իմաստով վերաբերում է այն անձանց, թվեր <u>օտարերկրյա որևէ պետության կողմից</u> ճանաչվել են քաղաքացիություն չունեցող անձ, ինչի արդյունքում այն կտարանջատվի <u>ՀՀ-ում մշտապես բնակվող</u> քաղաքացիություն չունեցող անձ հասկացությունից |
| 43. Նախագծի ընդունման պարագայում անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ նախատեսել ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշման մեջ, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի թիվ 318-Ն որոշումը: | **Ընդունվել է ի գիտություն** |
| 44. ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ առարկություններ չունենք: | **Ընդունվել է ի գիտություն** |
| | |
| Վարչապետի աշխատակազմի պետաիրավական վարչություն | |
| 1. «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մասով որպես ընդհանրական դիտարկում հարկ է նկատել, որ նախագիծը ներկայացնում է զուտ քաղաքացիություն չունեցող անձի | **Չի ընդունվել**<br>Նախագծի 1-ին հոդվածով սահմանված է, որ օրենքը կարգավորելու է Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացը, ամրագրում և երաշխավորում է քաղաքացիություն |

| | |
|---|---|
| կարգավիճակի ձեռքբերման ընթացակարգային նորմեր, սակայն կարգավիճակի, այն ձեռք բերելուց հետո իրավական հետևանքների առումով կարգավորումները բացակայում են, որի պայմաններում առաջարկվող օրենքը վերածվում է ընդամենն ընթացակարգային նորմեր սահմանող իրավական ակտի, ուստի նշված բովանդակությամբ առանձին օրենքի ընդունումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: | չունեցող անձանց իրավունքները, ազատությունները և պարտականությունները, Հայաստանի Հանրապետությունում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց արտաքսման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման հետ կապված հարաբերությունները, որպիսի հանգամանքը հիմք ընդունելով նախագծով տրվել են կարգավորումներ դիմում ընդունելու, քննարկելու, որոշում կայացնելու և այլ հարաբերությունների հետ կապված: Մնացած գործընթացները կիրականացվեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի կարգավորումներին համապատասխան: Նշվել է նաև, որ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ձեռք բերելուց հետո նշված անձինք ստանում են անձը հաստատող փաստաթուղթ և որպես ՀՀ-ում օրինական բնակության իրավունք ունեցող անձ իրացնում իրենց իրավունքները: Այս մասով, օրինագծի 14-րդ հոդվածը սահմանում է, որ  քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման մասին որոշման կայացման պահից քաղաքացիություն չունեցող անձն ունի ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Ինչ վերաբերում է իրավունքների և պարտականությունների ծավալին և սահմանափակումներին, ապա այն սահմանվում է կոնկրետ ոլորտի օրենսդրությամբ /օրինակ՝ ՔՉԱ ճանաչված անձինք չեն մասնակցում զինվորական ծառայությանը, համապետական ընտրություններին և այլն/, հետևաբար սույն օրենքում նման ամրագրումներ կատարելու անհրաժեշտություն չկա: |
| 2. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներն իրավակարգավորիչ նշանակություն չունեն և անհարկի ծանրաբեռնում են նախագիծը: Ավելին, օրինակ 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումն արդեն իսկ իր ամրագրումն ունի Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում, ուստի գործելու է՝ անկախ նախագծում տեղայնացվելու հանգամանքից: | **Ընդունվել է մասամբ**<br><br>1-ին հոդվածից «նպատակի» նշումը հանվել է, քանի որ ըստ էության օրենքի կարգավորման առարկան ամրագրում է իրավական ակտի  ընդունման անհրաժեշտությունը:<br>Ինչ վերաբերում է 2-րդ հոդվածին, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրինագիծը բխում է «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» կոնվենցիաների պահանջներից, նատակ ունի ապահովել կոնվենցիաների իմպլեմենտացումը և որպես ոլորտում հարաբերություններ կարգավորող հատուկ օրենք ամրագրվել է օրենսդրական |

| | |
|---|---|
| | ակտերի շրջանակը և շեշտադրվել միջազգային պայմանագրերի գերակայությունը: Նման կառուցվածքը բնորոշ է ՀՀ կողմից ընդունվող օրենսդրական ակտերին և որևէ հակասություն չի առաջացնում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջների հետ: |
| 3. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ հատուկ կարիքներ ունեցող անձինք են՝ հաշմանդամություն, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, հղի կանայք կամ թրաֆիքինգի կամ խոշտանգումների կամ բռնաբարության կամ **բռնության այլ ձևերի** ենթարկված անձը, տարեցներ (կենսաթոշակային տարիքի հասած անձինք): Ի տարբերություն մյուս թվարկվածների, մեր գնահատմամբ, անորոշ է բռնության այլ ձևերի ենթարկված անձ բնորոշման հարցը, մասնավորապես՝ նման ընդհանրական ձևակերպման առկայությունը կողմնորոշիչ տվյալների բացակայության պայմաններում իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալու:<br>Հարկ է նկատել նաև, որ «բռնաբարություն» տերմինը գործող Քրեական օրենսգրքի շրջանակներում այլևս կիրառելի եզրութաբանություն չէ: | **Ընդունվել է** |
| 4. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացը սկսվում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող անձի՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ որոշելու վերաբերյալ դիմումի **կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ,** այդ թվում՝ այլ մարմիններից ու կազմակերպություններից ստացված տեղեկատվության հիման վրա: Մինչդեռ, նախագծային կարգավորումներով բացահայտված չեն քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացում լիազոր մարմնի նախաձեռնության դրսևորման ձևերը և սահմանները, որպեսզի հնարավոր լինի գնահատել նախատեսված դրույթի իրավաչափությունը: | **Ընդունվել է** |

| | |
|---|---|
| 5. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **հատուկ կարիքներ ունեցող անձինք դիմումը կարող են ներկայացնել փաստաբանի միջոցով**: Առաջարկվող նորմի նախատեսված չլինելու պայմաններում անձը հնարավորություն կունենա դիմում ներկայացնել, օրինակ, խնամակալի կամ ներկայացուցչի, այդ թվում՝ փաստաբանի միջոցով, մինչդեռ, նշված նորմի ընդունման պայմաններում անձի նման հնարավորությունը սահմանափակվելու է՝ հանգեցնելով, ըստ էության, վերջինիս վիճակը վատթարացման: | **Չի ընդունվել**<br>Պրակտիկայում հիմնականում քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու համար դիմում ներկայացնող անձինք չեն ունենում որևէ փաստաթուղթ /ընդհուպ՝ նաև ծննդյան վկայական/, որը հնարավորություն կընձեռի վարչական մարմնին նույնացնել անձի ինքնությունը: Նման պայմաններում այդ անձինք չեն կարող լիազորագիր տրամադրել երրորդ անձի՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու և իրենց փոխարեն գործողություններ կատարելու համար, ինչով պայմանավորված այդ իրավունքը օրինագծով վերապահվել է փաստաբանին /հանրային պաշտպանին/, որն իր լիազորությունների շրջանակներում ինչպես մինչև դիմումի ներկայացնելը, այնպես էլ դիմումի քննարկման փուլում համագործակցելով վարչական մարմնի հետ կարող է իրավասու կառույցներից ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթեր՝ անձի նույնացումն ապահովելու համար, իսկ իրավաբանական նշանակության փաստ հաստատելու անհրաժեշտության դեպքում՝ որպես ներկայացուցիչ հանդես գալ համապատասխան դատական ատյաններում կամ նոտարական գրասենյակներում: Բացի այդ, դիմումատուի նույնցված չլինելու և փաստաթուղթ չունենալու պայմաններում այլ անձի կողմից դիմում ներկայացնելու փաստը կարող է չարաշահումների և կեղծիքների տեղիք տալ, անհարկի ծանրաբեռնելով վարչական մարմնին՝ անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու կամ վարչարարական այլ գործողություններ իրականացնելու ժամանակ:<br>Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ անձն ունի խնամակալ կամ հոգաբարձու, ապա այս հարաբերությունները Քաղաքացիական օրենսգրի կարգավորման տիրույթում են և առանձին նշում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է |
| 6. Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ մասերը, 6-րդ հոդվածի 7-րդ մասը Լիազոր մարմնի համար նախատեսում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի նկատմամբ խնամակալի կամ հոգաբարձուի **նշանակման** | **Ընդունվել է մասամբ**<br>Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ մասերը լրամշակվել են<br>Ինչ վերաբերում է 6-րդ հոդվածի 7-րդ մասին և 21-րդ հոդվածին, ապա հաշվի առնելով ՉՔԱ վարույթի առանձնահատկությունները հստակ ձևակերպումներ |

| | |
|---|---|
| **հարցում աջակցելու,** դիմումի լրացման հարցում կամ այլ մարմինների հետ հարաբերություններում դիմողներին **աջակցելու** անորոշ ձևակերպումների տեսքով իրավասություն վերապահող դրույթներ, որոնց գործնական կիրառությունն ու սահմանները պարզ չեն: Մասնավորապես, ուրվագծված չէ, թե Լիազոր մարմինը տվյալ իրավասության շրջանակում գործողությունների կոնկրետ ինչ շրջանակ է պարտավորվելու իրականացնել: Նույն դիտարկումը վերաբերում է նաև Նախագծի 21-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության բոլոր պետական մարմիններն ու տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանված՝ **քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը աջակցելու** և քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացում **Լիազոր մարմնին օժանդակելու** իրավասություններին | այս մասով հնարավոր չէ տալ, քանի որ փաստական հանգամանքները շատ տարբեր են և բնական է, որ օժանդակությունը պետք է լինի օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակում /օրինակ՝ ՔԿԱԳ մարմինները վարույթի ընթացքում պետք է օժանդակեն ՔԿԱԳ ակտեր ձեռք բերելուն /այդ թվում՝ այլ պետություններից/, ՏԻՄ մարմիններից վարույթի ընթացքում հաճախ պահանջվում են հավաստումներ, որ դիմումատուն բնակվել է տվյալ համայնքում, կամ անձը կարող է գտնվել առողջապահական հիմնարկում /այդ թվում՝ հոգեկան առողջության կենտրոնում/ և լիազոր մարմինն անհրաժեշտություն ունենա որոշակի տեղեկություններ ձեռք բերելու, անձին անձամբ այցելելու, լսում անելու և այլն/: |
| 7. Նախագծի 15-րդ և 16-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ լիազոր մարմնի կողմից անձի դիմումը մերժելը ենթակա է բողոքարկման **վերադաս վարչական մարմին** կամ դատարան, իսկ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը անվավեր ճանաչելը՝ միայն դատարան, որպիսի հանգամանքը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Նույն տրամաբանությամբ, պարզ չէ Նախագծի 18-րդ հոդվածով դիմումը կրկին ներկայացնելու հնարավորությունը կապելը միայն քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչումը մերժելու, բայց ոչ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու հետ: | **Ընդունվել է** |
| Վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչություն | |
| 1. «Օտարերկրացիների մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «օտարերկրացիներ» հասկացությունը տարածվում է նաև *<u>քաղաքացիություն չունեցող անձանց վրա</u>*: ««Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծով | **Ընդունվել է մասամբ**<br>Այստեղ անհրաժեշտ է տարանջատել այն անձանց, ովքեր՝<br>1. քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ են ստացել և փաստաթղթավորվել Հայաստանի Հանրապետության կողմից /որպիսի հարաբերությունները կարգավորվելու են սույն օրինագծով/, |

| | |
|---|---|
| առաջարկվում է սույն դրույթը փոփոխել՝ սահմանելով, որ ««Օտարերկրացիների մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) տարածվում է այն քաղաքացիություն չունեցող անձանց վրա, որոնց կարգավիճակը *<u>արդեն իսկ օտարերկրյա որևէ պետության կողմից ճանաչվել է</u>*: Արդյունքում ստացվում է, որ քաղաքացիություն չունեցողի կարգավիճակը ՀՀ-ի կողմից ճանաչվելու դեպքում Օրենքի կարգավորումները այդ անձանց վրա չեն տարածվելու, ինչը գտնում ենք խնդրահարույց է, քանի որ Օրենքով ամրագրված են քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակին վերաբերող մի շարք կարգավորումներ (օրինակ՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ գլուխներով նախատեսված կարգավորումները), որոնց առաջարկվող նոր օրենքի նախագծով անդրադարձ չի կատարվում:<br><br>Այդ պարագայում, գտնում ենք նաև, որ ծանրակշիռ հիմնավորման կարիք ունի գործող Օրենքի առկայության պարագայում «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը:<br><br>Ինչ վերաբերում է նախագծի 14-րդ հոդվածին, ապա այդ հոդվածով նախատեսված կարգավորումները իրավական որոշակիության տեսանկյունից խնդրահարույց են: | 2. քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ են ստացել և փաստաթղթավորվել օտարերկրյա պետության կողմից: Վերջիններս համարվում են այդ երկրի օրինական բնակիչներ, Հայաստանի Հանրապետությունում դիտարկվում են որպես օտարերկրացի /օրինակ՝ Հայաստան են ժամանել զբոսաշրջության կամ այլ գործունեություն իրականացնելու համար, օտարերկրյա պետության կողմից տրված քաղաքացիություն չունեցող անձի ճամփորդական փաստաթղթով/, ուստի նրանց նկատմամբ տարածվում է «Օտարերկրացիների մասին» օրենքի դրույթները /հենց նշված հանգամանքը հաշվի առնելով էլ, սույն օրինագրեի փաթեթի կցվել է «օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ նախատեոսղ նախագիծ, որի 1-ին հոդվածով շարադրվում է, որ օտարերկրացի են հանդիսանում այն անձինք, ովքեր օտարերկրյա որևէ պետության կողմից ճանաչվել են քաղաքացիություն չունեցող անձ/: ՀՀ-ում երկարաժամկետ բնակվելու և որոշակի գործունեություն ծավալելու համար նրանք պետք է ձեռք բերեն կացության կարգավիճակ կամ այլ կերպ օրինականացնեն իրենց բնակությունը:<br>Ներկայացված օրինագծով տրամադրվող իրավունքները և պարտականությունները նրանց նկատմամբ չեն տարածքում, ինչը սակայն չի սահմանափակում, որ վերջիններս դիմեն ՀՀ-ում քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու համար և որոշակի վարչարարության արդյունքում լիազոր մարմինը նրանց ճանաչի ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձ:<br>Մինչդեռ, ՀՀ կողմից քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու դեպքում /որպիսի հարաբերություններն էլ հենց սույն օրինագծով կանոնակարգվում են/ նշված կատեգորիայի անձինք Հայաստանի Հանրապետությունում համարվում են օրինական բնակիչներ և կարող են իրացնել իրենց իրավունքները ՀՀ-ում առանց լրացուցիչ կացության կարգավիճակ ձեռք բերելու՝ ՀՀ կողմից տրված նույնականացման քարտով կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով: Ինչ վերաբերում է 14-րդ հոդվածին, ապա այն խմբագրվել է՝ կոնվենցիաների պահանջներին համահունչ: |
| 2. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանվում է օրենքի նպատակը, մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին | **Ընդունվել է**<br><br>1-ին հոդվածից «նպատակի» նշումը հանվել է, քանի որ ըստ էության օրենքի |

| | |
|---|---|
| մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը կարող է պարունակել *<u>նախաբան</u>*, որը սահմանում է իրավական ակտի ընդունման *<u>նպատակներն</u>* ու պատճառները | կարգավորման առարկան ամրագրում է իրավական ակտի անհրաժեշտությունը: |
| 3. Նախագծի 2-րդ և 4-րդ հոդվածների ամրագրման անհրաժեշտությունը բացակայում է՝ հաշվի առնելով դրանց կարգավորիչ նշանակություն չունենալու հանգամանքը: | **Չի ընդունվել**<br><br>Օրինագիծը բխում է «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» կոնվենցիաների պահանջներից և որպես տվյալ ոլորտում հարաբերություններ կարգավորող հատուկ օրենք ամրագրվել է օրենսդրական ակտերի շրջանակը և չեշտադրվել միջազգային պայմանագրերի գերակայությունը:<br>Ինչ վերաբերում է 4-րդ հոդվածով սահմավող հիմնական սկզբունքներին, ապա «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտը կարող է ունենալ սկզբունքներ, որոնք իրավական ակտի նորմը մեկնաբանելիս ունեն էական նշանակություն այն ընդունող մարմնի նպատակը գնահատելու համար:<br>Նման կառուցվածքը բնորոշ է ՀՀ կողմից ընդունվող օրենսդրական ակտերին և որևէ հակասություն չի առաջացնում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջների հետ: |
| 4. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացը իրականացվում է «*<u>Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»</u>* օրենքին համապատասխան, եթե *<u>սույն օրենքով այլ բան նախատեսված չէ</u>*: Նկատի ունենալով, որ այս գործընթացը վերաբերում է անձանց որոշակի կարգավիճակի ճանաչմանը, որը հատուկ ընթացակարգային կարգավորումներ է պահանջում, գտնում ենք, որ առաջարկվող օրենքի հետ միաժամանակ «*<u>Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»</u>* օրենքի գործողության կանոնի սահմանման պարագայում բազմաթիվ անորոշություններ և հակասական իրավիճակներ են առաջանելու: | **Չի ընդունվել**<br>Նման կարգավորումը բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությունից, մասնավորապես քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման առանձնահատկությունները սահմանվել են ներկայացվող օրինագծով, իսկ այն գործընթացները, որոնք վերաբերում են ընդհանուր վարչարարությանը և կարող են կանոնակարգվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով ներկայացվող նախագծում ներառելու և անհարկի նախագիծը ծանրաբեռնելու անհրաժեշտություն չկա |
| 5. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հատուկ կարիքներ ունեցող անձինք դիմումը կարող են ներկայացնել | Պրակտիկայում հիմնականում քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու համար դիմում ներկայացնող անձինք չեն ունենում որևէ |

| | |
|---|---|
| փաստաբանի միջոցով, մինչդեռ պարզաբանված չէ առաջարկվող կարգավորման հիմնավորվածությունը: | փաստաթուղթ /ընդհուպ՝ նաև ծննդյան վկայական/, որը հնարավորություն կընձեռի վարչական մարմնին նույնացնել անձի ինքնությունը: Նման պայմաններում այդ անձինք չեն կարող լիազորագիր տրամադրել երրորդ անձի՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու և իրենց փոխարեն գործողություններ կատարելու համար, ինչով պայմանավորված այդ իրավունքը օրինագծով վերապահվել է փաստաբանին /հանրային պաշտպանին/, որն իր լիազորությունների շրջանակներում ինչպես մինչև դիմումի ներկայացնելը, այնպես էլ դիմումի քննարկման փուլում համագործակցելով վարչական մարմնի հետ կարող է իրավասու կառույցներից ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթեր՝ անձի նույնացումն ապահովելու համար, իսկ իրավաբանական նշանակության փաստ հաստատելու անհրաժեշտության դեպքում՝ որպես ներկայացուցիչ հանդես գալ համապատասխան դատական ատյաններում կամ նոտարական գրասենյակներում: Բացի այդ, դիմումատուի նույնցաված չլինելու և փաստաթուղթ չունենալու պայմաններում այլ անձի կողմից դիմում ներկայացնելու փաստը կարող է չարաշահումների և կեղծիքների տեղիք տալ, անհարկի ծանրաբեռնելով վարչական մարմնին՝ անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու կամ վարչարարական այլ գործողություններ իրականացնելու ժամանակ: |
| 6. Նախագծի մի շարք դրույթներ խնդրահարույց են իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, օրինակ՝<br><br>ա) նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են *<u>դիմումը մերժելու հիմքերը</u>*, սակայն այդ հիմքերի (օրինակ՝ 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետեր) բովանդակությունը բավարար չափով որոշակացված չեն: | **Չի ընդունվել**<br><br>ա/ 15-րդ հոդվածում սահմանված հիմքերը ամրագրված են 1954թ-ի «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածում, որին Հայաստանը միացել է 1994թ-ին և հենց այդ հիմքերը գնահատելու համար էլ օրինագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է ազգային անվտանգության ոլորտի պետական կառավարման մարմին հարցում կատարելու պահանջ: Այս պարագայում այն բխում է միջազգային պայմանագրերի գերակայության սկզբունքից |

| | |
|---|---|
| բ) Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով սահմանվող քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով ՀՀ լիազոր մարմնի լիազորություններից չի որոշակիացվում, թե կոնկրետ ինչ իրավասությունների շրջանակ է նրան վերապահվում, որի պարագայում անհրաժեշտ է հստակեցնել վերապահվող լիազորությունների շրջանակը:<br><br>Նույն դիտարկումը վերաբերում է նաև նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված այլ մարմինների իրավասությանը: | բ/ Ինչ վերաբերում է 20-րդ և 21-րդ հոդվածներին, ապա հաշվի առնելով ՉՔԱ վարույթի առանձնահատկությունները հստակ ձևակերպումներ այս մասով հնարավոր չէ տալ, քանի որ փաստական հանգամանքները շատ տարբեր են: Համագործակցությունը և օժանդակությունը պետք է լինեն օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակում /օրինակ՝ ՔԿԱԳ մարմինները վարույթի ընթացքում պետք է օժանդակեն ՔԿԱԳ ակտեր ձեռք բերելուն /այդ թվում՝ այլ պետություններից/, ՏԻՄ մարմիններից վարույթի ընթացքում հաճախ պահանջվում են հավաստումներ, որ դիմումատուն բնակվել է տվյալ համայնքում, կամ անձը կարող է գտնվել առողջապահական հիմնարկում /այդ թվում՝ հոգեբուժարանում/ և լիազոր մարմինն անհրաժեշտություն ունենա որոշակի տեղեկություններ ձեռք բերելու, անձին անձամբ այցելելու, լսում անելու և այլն/: |
| 7. Նախագծում և կից ներկայացված փաթեթում առկա են որոշակի տեխնիկական թերություններ, որոնք վերանայման կարիք ունեն, մասնավորապես՝ ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր 21-րդ կետով, սակայն հարկ է նկատել, որ «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասը արդեն իսկ պարունակում է 21-րդ կետ: | **Ընդունվել է** |

**ՀՀ ներքին գործերի նախարարություն**

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## «ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

**1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Ներկայացված նախագծերի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902–Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի՝ ՆԳՆ միջոցառումների 8-րդ կետի (Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի հետ կապված հարաբերությունները միջազգային չափանիշներին համապատասխան շարունակական կատարելագործում) պահանջից, «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի սեպտեմբերի 28-ի և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիաներով ամրագրված պարտավորությունների, ինչպես նաև 2019թ-ին Փախստականների գլոբալ Ֆորումի ընթացքում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած հանձնառությունները պատշաճ կատարելու անհրաժեշտությունից:

**2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ՝**

Նախագծերի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902 – Լ որոշմամբ հաստատված **Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից**, մասնավորապես՝ ՀՀ ՆԳՆ միջոցառումների 8-րդ կետից՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի հետ կապված հարաբերությունները միջազգային չափանիշներին համապատասխան շարունակական կատարելագործումն ապահովելու նպատակով:

**3. Ընթացիկ իրավիճակը, առաջարկվող կարգավորման բնույթը**

Քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ ամրագրելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Քաղաքացիություն չունեցող անձանց /ապատրիդների/ կարգավիճակի մասին» 1954 թվականի սեպտեմբերի 28-ի և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիաներն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել դեռևս 1994 թվականին, սակայն մինչ օրս ՀՀ կողմից ստանձնած որոշ պարտավորություններ պատշաճ կերպով չեն կատարվել:

Կոնվենցիաների ճշգրիտ կիրառության և ապաքաղաքացիության խնդիրների լուծման նպատակով ՄԱԿ-ի ՓԳՀ-ի նախաձեռնությամբ Ժնևում 2010 թվականին դեկտեմբերին անցկացված՝ ապաքաղաքացիության սահմանման ընթացակարգերի և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի վերաբերյալ փորձագիտական ժողովի ամփոփ եզրահանգումների հիման վրա մշակված ապաքաղաքացիության վերաբերյալ N 2 ուղեցույցի համաձայն՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման համար պետությունը պետք է սահմանի հստակ ընթացակարգ: Հարկ է նշել, որ մինչ օրս որևէ օրենսդրական ակտով նման ընթացակարգ սահմանված չի եղել:

«Օտարերկրացիների մասին» օրենքը և ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 318-Ն որոշումը որոշակի դրվագային կարգավորումներ են նախատեսում քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի որոշման և նրանց տրամադրվող փաստաթղթերի վերաբերյալ: Բացի այդ, ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 318-Ն որոշմամբ սահմանված կարգով քաղաքացիություն չունեցող անձին տրամադրվող կացության վկայականը իր տեխնիկական պահանջներով ևս չի համապատասխանում ICAO-ի ստանդարտներին:

Վերոգրյալով պայմանավորված ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902–Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի՝ ՆԳՆ միջոցառումների ցանկի 8-րդ կետով Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի հետ կապված հարաբերությունները միջազգային չափանիշներին համապատասխան շարունակական կատարելագործելու նպատակով նախատեսվել է առանձին միջոցառում՝ «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի ընդունում:

Միևնույն ժամանակ, վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում նկատվում էր քաղաքացիություն չունեցող անձանց թվի աճ, ինչով պայմանավորված 2019թ. Փախստականների գլոբալ ֆորումի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց հանձնառություններ՝

- ուսումնասիրել, վեր հանել այն հիմնական պատճառները, որոնք հիմք են հանդիսացել քաղաքացիություն չունեցող անձանց թվի կտրուկ աճի համար, գծագրել խնդիրները, ոլորտի հիմնական մարտահրավերները և դրանց լուծման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, իրականացնել գործուն քայլեր,
- վերանայել օրենսդրությունը՝ հիմնել իրավական անհրաժեշտ մեխանիզմներ, հիմքեր ՔՉԱ թիվը նվազեցնելու և նրանց իրավունքների իրացումը երաշխավորելու,
- ընդունել իրավական ակտ, որը կկանոնակարգի քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման համար հստակ ընթացակարգ:

Վերը թվարկված հանձնառություններից երկուսն արդեն իսկ ամբողջությամբ կատարվել են, սույն նախագծի նախապատրաստումը միտված է 3-րդ հանձնառության իրականացմանը, որը մեկ միասնական իրավական ակտում կներառի ինչպես քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը որոշելու գործընթացը, քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով լիազոր մարմինների գործառույթները, այնպես էլ կսահմանի այդ անձանց իրավունքներն ու պարտականությունները:

«Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի ընդունմամբ պայմանավորված փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել նաև՝

- **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում, քանի որ** հիշյալ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված քաղաքացիություն չունեցող անձի հասկացությունը նշված ձևակերպմամբ չի համապատասխանում «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի կոնվենցիայով սահմանված ձևակերպմանը, մինչդեռ «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագծով ամրագրվում է նշված հասկացության սահմանումը կոնվենցիային համահունչ՝ նշելով, որ քաղաքացիություն չունեցող անձը այն անձն է, ով չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ այդ պետության օրենքի ուժով: Վերոգրյալով պայմանավորված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել,
- **«Փաստաբանության մասին» օրենքում,**
- **«Օտարերկրացիների մասին» օրենքում:**

**4. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունները.**

Օրինքների նախագծերի ընդունումը ֆինանսական լրացուցիչ միջոցների անհրաժեշտություն կամ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների մասում փոփոխություն չի առաջացնի:

**5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք.**

Նախագիծը մշակվել է ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից:

**6. Ակնկալվող արդյունքը**

Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ իրականացում, օրենքով քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու ընթացակարգի սահմանում, պարտականությունների օրենսդրական ամրագրում, քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների երաշխավորում:

**ՀՀ ներքին գործերի նախարարություն**

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացը, ամրագրում և երաշխավորում է քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները, ազատությունները և պարտականությունները, Հայաստանի Հանրապետությունում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց արտաքսման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց մասին օրենսդրությունը**

1. Քաղաքացիություն չունեցող անձանց մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից և այլ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նորմերը:

**Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**1)** ***քաղաքացիություն չունեցող անձ՝*** անձ, ով չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ այդ պետության օրենսդրության ուժով կամ օրենսդրության կիրառության արդյունքում.

**2)** ***ծագման երկիր՝*** անձի նախկին քաղաքացիության պետությունը կամ այն պետությունը, որում նախկինում բնակվել է քաղաքացիություն չունեցող անձը կամ այն անձը, որի քաղաքացիությունը հնարավոր չէ հաստատել.

**3)** ***առանց ուղեկցողի երեխա՝*** 18 տարին չլրացած անձ, որին Հայաստանի Հանրապետությունում չի ուղեկցում նրա մասին հոգ տանող որևէ չափահաս անձ.

**4)** ***ընտանիքից անջատված երեխա՝*** 18 տարին չլրացած անձ, որին Հայաստանի Հանրապետությունում ուղեկցում է չափահաս անձ, սակայն երեխան անջատված է ծնողներից կամ նրա մասին օրենքի կամ սովորույթի հիման վրա հոգ տանողից.

**5)** ***քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման համար դիմող (այսուհետ՝ դիմող)՝*** անձ, ով քաղաքացիություն չունեցողի կարգավիճակի ճանաչման խնդրանքով դիմել է լիազոր մարմին և ում դիմումի վերաբերյալ դեռևս վերջնական որոշում չի կայացվել.

**6)** ***լիազոր մարմին՝*** Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն.

7) ***արտաքսում՝*** սույն օրենքով նախատեսված դեպքերում իրավասու պետական մարմնի կողմից քաղաքացիություն չունեցող անձի հարկադիր հեռացումը Հայաստանի Հանրապետությունից.

8) ***հատուկ կարիքներ ունեցող անձ***՝ հաշմանդամություն, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, հղի կանայք կամ թրաֆիքինգի կամ խոշտանգումների կամ բռնության ենթարկված անձ, տարեցներ (կենսաթոշակային տարիքի հասած անձինք):

**Հոդված 4. Օրենքի հիմնական սկզբունքները**

1. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են երեխայի լավագույն շահերի, խտրականության արգելքի և մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների և միջազգային իրավական պրակտիկայի այլ հիմնարար սկզբունքների պահպանմամբ:

## ԳԼՈՒԽ 2
## ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

**Հոդված 5. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու համար դիմում ներկայացնելը**

1. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին համապատասխան, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ: Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացը սկսվում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող անձի՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ որոշելու վերաբերյալ դիմումի (այսուհետ՝ դիմում) կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, այդ թվում՝ այլ մարմիններից, կազմակերպություններից և անձանցից ստացված՝ Հայաստանի

Հանրապետությունում բնակվող և անձը հաստատող որևէ փաստաթուղթ չունեցող անձի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա:

2. Դիմումը լիազոր մարմին է ներկայացվում գրավոր եղանակով՝ հայերեն լեզվով: Դիմումը ներկայացվում է անձամբ: Հատուկ կարիքներ ունեցող անձինք դիմումը կարող են ներկայացնել փաստաբանի միջոցով:

3. Եթե դիմողը չի տիրապետում Հայաստանի Հանրապետության պետական լեզվին կամ ունի լսողական կամ խոսքի խնդիրներ, ապա նրան անվճար տրամադրվում է թարգմանիչ (սուրդոթարգմանիչ):

4. Մինչև 16 տարեկան անձի համար դիմումը ներկայացնում է նրա ծնողներից մեկը կամ այլ օրինական ներկայացուցիչը: Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված մինչև 16 տարեկան երեխայի համար դիմումը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը: Անգործունակ ճանաչված անձի համար դիմումը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

5. Լիազոր մարմինն անհրաժեշտության դեպքում դիմում է խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի նկատմամբ խնամակալի կամ հոգաբարձուի նշանակման համար: Նշանակված խնամակալը կամ հոգաբարձուն քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացում առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի համար հանդիսանում է օրինական ներկայացուցիչ, ով պարտավոր է դիմումի քննարկման ընթացքում պատշաճ կերպով ներկայացնել երեխայի լավագույն շահերը, մասնակցել լիազոր մարմնի կողմից դիմումի քննարկմանը, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացի ապահովման համար անհրաժեշտ մյուս գործողություններին:

6. Դիմումը  պետք է պարունակի դիմողի անունը, ազգանունը, դիմողի հասցեն, դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են), դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը, դիմողի ստորագրությունը: Դիմումում, առկայության դեպքում, լրացվում է նաև քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ փաստեր, մասնավորապես,

դիմողի ծննդավայրը, նախկին բնակության վայրը և բնակվելու տևողությունը ցանկացած այլ երկրի տարածքում, նախկինում քաղաքացիություն ունենալու մասին, ընտանիքի անդամների (ծնող, որդեգրող, ամուսին, նախկին ամուսին, զավակ, քույր, եղբայր) վերաբերյալ տեղեկությունները՝ մասնավորապես, նրանց որևէ պետության քաղաքացի հանդիսանալու մասին: Դիմումում նշվում են նաև դիմողի անձնական տվյալներում կատարված փոփոխությունների, ինչպես նաև այլ պետություններից երբևէ ստացված փաստաթղթերի մասին (նույնիսկ եթե դրանք իր տրամադրության տակ չեն):

7. Դիմումատուի խնդրանքով, եթե վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին, լիազոր մարմինն աջակցում է դիմումի լրացման հարցում, ինչպես նաև պարզաբանում է դիմողին դիմումի քննարկման ողջ գործընթացը, իրազեկում է դիմումի քննարկման ողջ ընթացքում դիմողի իրավունքների և պարտականությունների մասին, իսկ դիմողի ցանկության դեպքում՝ տրամադրում է տեղեկանք այն մասին, որ դիմումը գտնվում է քննարկման փուլում:

**Հոդված 6. Դիմողի իրավունքները, ազատությունները և պարտականությունները քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացի ժամանակահատվածում**

1. Դիմումի քննարկման ողջ ժամանակահատվածում դիմողն իրավունք ունի գտնվելու և աշխատելու Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով օգտվում է քաղաքացիություն չունեցող անձանց վերապահված մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներից և ազատություններից:

2. Դիմողը մինչև սույն օրենքի համաձայն իր ներկայացրած դիմումի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը չի կարող արտաքսվել Հայաստանի Հանրապետության տարածքից:

3. Բանավոր կամ գրավոր հաղորդակցման ժամանակ դիմողը իրավունք ունի գործածել իր մայրենի լեզուն կամ իրեն հասկանալի այլ լեզու:

4. Դիմումի քննարկման ընթացքում դիմողը «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն իրավունք ունի օգտվել անվճար իրավաբանական օգնությունից՝ իր դիմումի քննարկման վարույթի շրջանակներում: Լիազոր մարմինը պարտավոր է դիմումն ընդունելիս դիմողներին տեղեկացնել անվճար իրավաբանական օգնության իրավունքի մասին:

5. Լիազոր մարմինը դիմումն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում անձին է հանձնում սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված ինքնությունը հավաստող վկայական, որը հանդիսանում է դիմողի անձը հաստատող փաստաթուղթ՝ դիմումի քննարկման ողջ ժամանակահատվածում:

6. Դիմումի քննարկման ողջ ժամանակահատվածում դիմողը պարտավոր է՝

1) համագործակցել լիազոր մարմնի հետ.

2) լիազոր մարմնին փոխանցել իր տրամադրության տակ գտնվող ապացույցները կամ ցանկացած այլ տեղեկատվություն, որը կարող է նշանակություն ունենալ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման համար.

3) ներկայանալ լիազոր մարմին հարցազրույցի նպատակով.

4) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

7. Լիազոր մարմինն իր իրավասության շրջանակներում աջակցում է դիմողներին այլ մարմինների հետ հարաբերություններում նրանց՝ սույն օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված բոլոր իրավունքների և ազատությունների իրացման հարցում:

**Հոդված 7. Դիմողի ինքնությունը հավաստող վկայական**

1. Լիազոր մարմինը դիմողին անվճար տրամադրում է ինքնությունը հավաստող վկայական, որի ձևը և դրանում ամրագրման ենթակա անհատական տվյալների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

2. Ինքնությունը հավաստող վկայականը հանդիսանում է դիմողի անձը հաստատող և Հայաստանի Հանրապետությունում նրան օրինական գտնվելու իրավունք վերապահող փաստաթուղթ: Ինքնությունը հավաստող վկայականը օգտագործվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Ինքնությունը հավաստող վկայականը տրվում է վեց ամիս վավերականության ժամկետով, որը կարող է երկարաձգվել դիմումի քննարկման երկարաձգված ժամկետին համապատասխան կամ մինչև դիմումի քննարկման արդյունքում կայացված որոշման բողոքարկման վարույթի ավարտը՝ անձի դիմումի հիման վրա: Մինչև վավերականության ժամկետի ավարտը ինքնությունը հավաստող վկայականը դառնում է անվավեր, եթե քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ստանալու արդյունքում անձը ստացել է քաղաքացիություն չունեցող անձի նույնականացման քարտ: Ինքնությունը հավաստող վկայականի կորստյան կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը անձի դիմումի հիման վրա երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է ինքնությունը հավաստող նոր վկայական, որի վավերականության ժամկետը սահմանելիս հիմք է ընդունվում դիմումի քննարկման ժամկետը:

## Հոդված 8. Դիմումի քննարկումը

1. Դիմումը քննարկվում է լիազոր մարմնի կողմից՝ դիմումը ստանալուց հետո վեցամսյա ժամկետում: Գործի բարդությամբ, այդ թվում օտարերկրյա պետություններ հարցումներ կատարված լինելու հանգամանքով պայմանավորված՝ դիմումի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել ևս 3 ամսով:

2. Դիմումի քննարկման ընթացքում լիազոր մարմինն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում հավաքելու քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ անձի ծննդավայրից, նրա գտնվելու կամ բնակության նախկին վայրերից, ինչպես նաև այն

պետություններից, որոնց քաղաքացիներ են հանդիսանում դիմողի ընտանիքի անդամները (ծնող, որդեգրող, ամուսին, նախկին ամուսին, զավակ, քույր, եղբայր) կամ այն պետություններից, որոնց քաղաքացիներ են հանդիսացել դիմողը և (կամ) դիմողի ընտանիքի անդամները (ծնող, որդեգրող, ամուսին, նախկին ամուսին, զավակ, քույր, եղբայր) նախկինում:

3. Լիազոր մարմինը նախքան ապացույցների հավաքման գործընթացը սկսելը պարզում է դիմողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստանի հայց ներկայացված լինելու հանգամանքը:

4. Լիազոր մարմինը հաշվի է առնում անչափահասների լավագույն շահը և երաշխավորում է նրանց մասնակցությունն ու լսված լինելու իրավունքը դիմումի քննարկման բոլոր փուլերում, ինչպես նաև իրենց վերաբերող որոշումներ կայացնելիս՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով նրանց տարիքն ու հասունության աստիճանը՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի:

**Հոդված 9. Հարցազրույցը**

1. Դիմումը ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում լիազոր մարմինը դիմողի հետ անցկացնում է հարցազրույց:

2. Հարցազրույցի ընթացքը արձանագրվում է: Լիազոր մարմնի առաջարկությամբ՝ դիմողի գրավոր համաձայնության դեպքում հարցազրույցը ձայնագրվում է: Հարցազրույցի արդյունքում կազմվող արձանագրության մեջ ամփոփվում են հետևյալ տեղեկությունները՝

1) նույնականացնող տվյալներ (ազգանունը, անունը, սեռը, ծննդյան վայրը, օրը, ամիսը, տարեթիվը, ծնողների ազգանունը, անունը, ինչպես նաև նախկին ազգանունը, անունը, նախորդ քաղաքացիությունը՝ եթե այդպիսիք եղել են).

2) որոշման համար նշանակություն ունեցող փաստեր.

3) ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ տվյալները (փաստաթղթի տեսակը, համարը, գործողության ժամկետը, փաստաթղթի տրամադրման ամսաթիվը, վայրը, տրամադրող մարմնի անվանումը).

4) ընտանեկան դրությունը, ամուսնության գրանցման վայրը.

5) զբաղմունքը, կրթությունը.

6) Հայաստանի Հանրապետությունում բնակվելու, գտնվելու վայրը:

3. Հարցազրույցի ընթացքում դիմողը հայտնում է քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ հայցելու պատճառները, ներկայացնում իր տրամադրության տակ առկա՝ դիմումը հիմնավորող այլ ապացույցներ, որոնք նախկինում չէր ներկայացրել, առկայության դեպքում տրամադրում է տեղեկություններ, բացատրություններ, պարզաբանումներ կարգավիճակի որոշման հետ կապված բոլոր էական փաստական հանգամանքների վերաբերյալ:

4. 10-16 տարեկան երեխայի հետ հարցազրույց անցկացնելու և տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում այն անցկացվում է ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի ներկայությամբ:

5. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի հետ հարցազրույց անցկացնելու և տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում այն անցկացվում է խնամակալի կամ հոգաբարձուի մասնակցությամբ, իսկ խնամակալի կամ հոգաբարձուի կամ երեխայի ցանկության դեպքում՝ նաև փաստաբանի մասնակցությամբ:

6. Անգործունակ ճանաչված անձի փոխարեն հարցազրույցն անցկացվում է օրինական ներկայացուցչի հետ:

7. Հարցազրույցի արձանագրությունը կազմելուց հետո հարցազրույցն անցկացնող պաշտոնատար անձի կողմից այն ընթերցվում է բարձրաձայն: Թարգմանության անհրաժեշտության դեպքում՝ դիմումատուի պահանջով լիազոր մարմնի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովվում է արձանագրության գրավոր թարգմանությունը դիմողին հասկանալի լեզվով: Հարցազրույցի արձանագրության վերջնական տեքստը ստորագրում են դիմողը, հարցազրույցն անցկացնող պաշտոնատար անձը, ինչպես նաև թարգմանիչը և

սույն հոդվածի 4-6-րդ և 8-րդ մասերով նախատեսված անձինք, եթե վերջիններս ներգրավված են եղել հարցազրույցին:

8. Դիմողի ցանկությամբ հարցազրույցին կարող է մասնակցել նաև նրա փաստաբանը կամ այլ ներկայացուցիչ:

**Հոդված 10. Ապացույցները և ապացուցման կանոնները, ինչպես նաև ապացույցներ հավաքելու ընթացքում դիմումի քննարկման կասեցումը**

1. Դիմումի քննարկման ընթացքում դիմողը ներկայացնում է իր մոտ առկա և իր խնդրանքը հիմնավորող ապացույցներ և ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է առնչվել դիմումին:

2. Դիմումի քննարկման ընթացքում լիազոր մարմինը քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու կամ ներկայացված փաստաթղթերի իսկությունը ստուգելու նպատակով հարցումներ է կատարում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններ, կազմակերպություններ:

3. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու ընթացքում լիազոր մարմինը գնահատում է դիմողի ներկայացրած ապացույցները, Հայաստանի Հանրապետության այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից, այլ կազմակերպություններից ստացված տեղեկություններն ու փաստաթղթերը, տվյալ պետության քաղաքացիության մասին օրենսդրության և դրա գործնական կիրառության վերաբերյալ մասնագետների և մասնագիտացված կառույցներից և այլ հավաստի աղբյուրներից կամ ծագման երկրից ստացված տեղեկությունները, ինչպես նաև այլ տեղեկություններ:

4. Լիազոր մարմնի կամ նրա միջնորդությամբ՝ Հայաստանի Հանրապետության այլ պետական մարմնի կողմից օտարերկրյա պետության լիազորված մարմնին հարցում կատարելիս՝ մինչև դիմումի քննարկման համար սահմանված ժամկետի ավարտը պատասխան չստանալը դիտվում է որպես

անձի՝ տվյալ պետության քաղաքացիություն չունենալու ապացույց, եթե հակառակը հիմնավորող այլ ապացույցներ չկան:

5. Եթե դիմումի քննարկման ընթացքում պարզվում է, որ անձը միաժամանակ Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստան ստանալու դիմում է ներկայացրել, ապա քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման նպատակով ապացույցների հավաքման ընթացքում հաշվի են առնվում օրենքով ապաստանի տրամադրման համար ներկայացվող դիմումի քննարկման առանձնահատկությունները և անհրաժեշտության դեպքում որոշումը կայացվում է առանց օտարերկրյա պետություններ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու կամ փաստաթղթերի իսկությունը ստուգելու վերաբերյալ հարցումներ ուղարկելու: Եթե անձը միաժամանակ Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստան ստանալու դիմում է ներկայացրել և քաղաքացիություն չունենալու հանգամանքը պարզելու համար պահանջվում է ծագման երկիր հարցման կատարում, ապա քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացը կասեցվում է: Ապաստանի տրամադրման դիմումի վերաբերյալ վերջնական որոշումն ուժի մեջ մտնելու դեպքում դիմումի քննարկումը վերսկսվում է: Կասեցման ժամանակահատվածը չի հաշվարկվում դիմումի քննարկման համար օրենքով նախատեսված ընդհանուր ժամանակահատվածի մեջ:

6. Դիմումի քննարկման ընթացքում դիմողը օտար լեզվով կազմված փաստաթղթերը ներկայացնում է օրենքով սահմանված կարգով կատարված և վավերացված հայերեն թարգմանությունների հետ միասին: Փաստաթղթերի օրենքով սահմանված կարգով կատարված և վավերացված հայերեն թարգմանությունները դիմողի կողմից ներկայացնելու անհնարինության դեպքում լիազորված պետական կառավարման մարմինը դրանք ուղարկում է արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմին՝ Հայաստանի Հանրապետության դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների միջոցով այդ փաստաթղթերի իսկության մեջ հավաստիանալու նպատակով:

**Հոդված 11. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացի դադարեցում**

1. Լիազոր մարմինը դադարեցնում է քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացը, եթե՝

1) դիմողը մահացել է.

2) դիմողը գրավոր եղանակով հրաժարվել է իր դիմումից.

3) դիմողը հարցազրույցին լիազոր մարմնի 2 և ավելի անգամ գրավոր տեղեկացումներից հետո անհարգելի պատճառով չի ներկայացել և դիմումը ներկայացնելուց հետո անցել է 6 ամիս:

**Հոդված 12. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացն ավարտելը**

1. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացն ավարտվում է քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը ճանաչելու կամ ճանաչումը մերժելու մասին որոշում ընդունելով:

2. Եթե դիմողն իրենից անկախ հանգամանքներով պայմանավորված չի ներկայացրել որևէ փաստաթուղթ, ապա լիազոր մարմինը քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման կամ մերժման մասին որոշումը կայացնում է իր տրամադրության տակ առկա ապացույցների և տեղեկությունների հիման վրա: Դիմումի քննարկման ընթացքում չփարատված բոլոր կասկածները մեկնաբանվում են հօգուտ դիմող անձի:

**Հոդված 13. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ որոշման կայացումը**

1. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը ճանաչելու մասին որոշումը կայացվում է գրավոր, հայերենով, իսկ դիմողի ցանկության դեպքում՝ տրամադրվում է նաև որոշման թարգմանությունը՝ նրան հասկանալի լեզվով:

2. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման մասին որոշումը դիմողին է ուղարկվում որոշման ընդունման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ փոստով, դիմողի ցանկությամբ՝ նաև էլեկտրոնային փոստով:

3. Անգործունակ ճանաչված անձի կամ մինչև 18 տարեկան երեխայի (այդ թվում՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի) վերաբերյալ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման որոշումն ուղարկվում է նրա օրինական ներկայացուցչին՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

**Հոդված 14. Դիմողի իրավունքները, ազատությունները և պարտականությունները քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման կայացման պահին**

1. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման մասին որոշման կայացման պահից քաղաքացիություն չունեցող անձն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ նորմատիվ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

2. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման մասին որոշումը ստանալուց հետո քաղաքացիություն չունեցող անձը դիմում է լիազորված մարմին՝ սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված անձը հաստատող փաստաթուղթ ստանալու համար:

**Հոդված 15. Դիմումը մերժելու մասին որոշումը**

1. Դիմումը մերժվում է, եթե՝

1) դիմողն ունի Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության քաղաքացիություն.

2) ծանրակշիռ հիմքեր կան համարելու, որ դիմողը կատարել է խաղաղության կամ մարդկության դեմ ուղղված կամ պատերազմական հանցագործություն այնպես, ինչպես դրանք սահմանված են Հայաստանի Հանրապետության միջազգային փաստաթղթերում, որոնք կազմվել են նման հանցագործությունների առնչությամբ միջոցներ ձեռնարկելու նպատակով.

3) ծանրակշիռ հիմքեր կան համարելու, որ դիմողը, նախքան Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելը, կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն.

4) ծանրակշիռ հիմքեր կան համարելու, որ դիմողը մեղավոր է Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքներ գործելու համար:

2. Դիմումը մերժելու մասին որոշումը կայացվում է գրավոր, հայերենով, իսկ դիմողի ցանկության դեպքում՝ տրամադրվում է նաև որոշման թարգմանությունը՝ նրան հասկանալի լեզվով: Դիմումը մերժելու մասին որոշման մեջ հստակ նշվում են մերժման հիմքը և դատական կարգով դիմումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու ժամկետի և մերժման իրավական հետևանքների վերաբերյալ տեղեկություններ:

3. Դիմումը մերժելու մասին որոշումը դիմողին ուղարկվում է այն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ փոստով, դիմողի ցանկությամբ՝ նաև էլեկտրոնային փոստով:

4. Դիմումը մերժելու մասին որոշումը օրենքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել վերադաս վարչական մարմին կամ դատարան:

**Հոդված 16. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը անվավեր ճանաչելը**

1. Լիազոր մարմինը անվավեր է ճանաչում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը, եթե՝

1) ի հայտ են եկել մինչև կարգավիճակը ճանաչելու մասին որոշումն ընդունելու պահը գոյություն ունեցող, սակայն իրավասու պետական մարմնին անհայտ՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքներ.

2) ի հայտ են եկել տվյալներ, համաձայն որոնց դիմողը ներկայացրել է կեղծ տվյալներ կամ փաստաթղթեր, որոնք էական են եղել քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը ճանաչելու մասին որոշումն ընդունելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում լիազոր մարմինը իր որոշումը կայացնում է օրենքով սահմանված կարգով հարուցված վարչական վարույթի արդյունքում և ընդունված որոշումը եռօրյա ժամկետում տրամադրում է անձին՝ փոստով կամ դիմողի ցանկությամբ՝ էլեկտրոնային փոստով:

3. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը անվավեր ճանաչելու մասին որոշումը օրենքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել վերադաս վարչական մարմին կամ դատարան:

**Հոդված 17. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի դադարեցումը**

1. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը դադարում է, երբ անձը ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության քաղաքացիություն:

**Հոդված 18. Դիմումը կրկին ներկայացնելը**

1. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչումը մերժելու կամ կարգավիճակն անվավեր ճանաչելու մասին որոշման ընդունումից հետո քաղաքացիություն չունեցող անձը կարող է լիազոր մարմին ներկայացնել նոր դիմում, եթե գտնում է, որ առկա են իր դիմումը հիմնավորող նոր ապացույցներ կամ փաստեր, որոնք հիմնավոր պատճառներով չեն ներկայացվել առաջին դիմումի քննության ընթացքում: Կրկին ներկայացված դիմումը քննարկվում է սույն օրենքով սահմանված կարգով և որոշում կայացնելիս հաշվի են առնվում նախորդ դիմումի քննության ընթացքում տեղի ունեցած վերջին հարցազրույցից հետո ի հայտ եկած փաստերն ու ապացույցները, գործում առկա մյուս ապացույցների հետ միասին:

**Հոդված 19. Քաղաքացիություն չունեցող անձի արտաքսումը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, բացառությամբ պետական անվտանգությամբ կամ հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերի:

2. Պետական անվտանգությամբ կամ հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերում քաղաքացիություն չունեցող անձը Հայաստանի Հանրապետության տարածքից կարող է արտաքսվել «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ 3
## ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**Հոդված 20. Քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի իրավասությունները**

1. Քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով լիազոր մարմինը՝

1) իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիություն չունեցող անձանց և քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման համար դիմած անձանց հաշվառումը.

2) քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ ներկայացված դիմումի քննարկման ընթացքում սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերի առակայության կամ բացակայության մեջ հավաստիանալու նպատակով հարցում է ներկայացնում ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման համակարգի մարմին.

3) անհրաժեշտության դեպքում դիմում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, օրենքով սահմանված կարգով օտարերկրյա պետությունների պետական մարմիններին, արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմնի միջոցով օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններին և Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ծառայության մարմիններին, ինչպես նաև իրավասու համապատասխան կազմակերպություններ՝ սույն օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար տեղեկություններ, փաստաթղթեր կամ այլ աջակցություն ստանալու, ինչպես նաև դիմող անձի նույնականացումն ապահովելու խնդրանքով.

4) քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների իրականացման ու պաշտպանության հարցերով համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ.

5) առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի կամ հատուկ կարիքներ ունեցող անձի կողմից քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ դիմում ներկայացվելուն պես անհրաժեշտության դեպքում դիմում է աշխատանքի և սոցիալական

պաշտպանության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող լիազոր մարմին՝ վերջիններիս տեղավորումն ու խնամքը կազմակերպելու հարցով.

6) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

**Հոդված 21. Քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով այլ մարմինների իրավասությունները**

1. Հայաստանի Հանրապետության բոլոր պետական մարմիններն ու տեղական ինքնակառավարման մարմինները օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում՝

1) աջակցում են քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը.

2) քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը որոշելու գործընթացում օժանդակում են լիազոր մարմնին.

3) տեղեկություններ են տրամադրում լիազոր մարմնին իրենց գործառութային պարտականությունների կատարման ընթացքում բացահայտված՝ չփաստաթղթավորված անձանց վերաբերյալ:

## ԳԼՈՒԽ 4
## ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

**Հոդված 22. Քաղաքացիություն չունեցող անձանց տրվող անձը հաստատող փաստաթղթերը**

1. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց որպես անձը հաստատող փաստաթուղթ տրվում են քաղաքացիություն չունեցող անձի նույնականացման քարտ և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ:

2. Քաղաքացիություն չունեցող անձի նույնականացման քարտը և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը հավաստում են քաղաքացիություն չունեցող անձի ինքնությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական

գտնվելու և բնակվելու փաստը:

3. Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը քաղաքացիություն չունեցող անձին տրամադրվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար:

4. Քաղաքացիություն չունեցող անձանց նույնականացման քարտ և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տրամադրելու, փոխանակելու, անվավեր ճանաչելու կարգը, պայմանները, ժամկետները , ինչպես նաև փաստաթղթերի ձևը և նկարագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## ԳԼՈՒԽ 5

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 23. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրված կացության վկայականները համարվում են վավերական Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության

տարածքից դուրս՝ մինչև դրանց ժամկետի ավարտը, եթե քաղաքացիություն չունեցող անձը այն փոխանակելու դիմում չի ներկայացրել:

**Հայաստանի Հանրապետության**

**Նախագահի** **Վ. Խաչատուրյան**